ՔՈՐԱՎՈՐ ԱՎԵՏԱՐԱՆԸ

Արարատյան Հայրապետական Թեմի
Զորավոր Ս. Աստվածածին եկեղեցի

«ԶՈՐԱՎՈՐ» ԱՎԵՏԱՐԱՆ
ЕВАНГЕЛИЕ «ЗОРАВОР» (Всемогущий)
«ZORAVOR» (Powerful) GOSPEL

Մատթեոս ավետարանիչ (ՄՄ ձեռ. Հ՝ 4060, էջ 11բ)
Матеос евангелист (рук. Матенадарана N 4060, 11б)
Matheos evangelist (Ms 4060 of Matenadaran, 11b)

ЦЕРКОВЬ СВ. БОГОРОДИЦЫ «ЗОРАВОР»
THE CHURCH OF ST. ASTVATSATSIN «ZORAVOR»

АРСЕН АРУТЮНЯН
АРПИНЕ СИМОНЯН

ARSEN HARUTYUNYAN
ARPINE SIMONYAN

ЕВАНГЕЛИЕ «ЗОРАВОР» (Всемогущий)

«ZORAVOR» (Powerful) GOSPEL

ЕРЕВАН YEREVAN
2016

ԵՐԵՎԱՆԻ ՁՈՐԱՎՈՐ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ

ԱՐՍԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ԱՐՓԻՆԵ ՍԻՄՈՆՅԱՆ

ՁՈՐԱՎՈՐ ԱՎԵՏԱՐԱՆԸ

ԵՐԵՎԱՆ
2016

ԳԻՐ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ

«Մի հարցնէք, ի՞նչ է, ու՛ր է, ու՞րկե կուգայ հայի հոգին:
Մեր պապերու հնադարեան դպրութիւնն է ու հին լեզուն,
Ձմեռ բուքին, Նարեկացու վանքի խուցին ճրագն է ան.
Մագաղաթէ հին, հին մատեան տաղարանի
Ու Մեսրոպի գերեզմանին ու երազին Այբբենգիմն է հայու ոգին»:

ՀԱՍԱՍՏԵՂ

Հայոց ազգի անսպառ ոգեղենությամբ շաղախված և հարուստ ներաշխարհի, տիեզերածավալ մտքի արտահայտությունն են Մատենադարանի ձեռագիր գանձերը:

Այդ հուշ-մատյանները հայոց մշակույթի ոսկյա էջերն են, հայի բազմադարյա հոգևոր ժառանգության և խիզախումների խոսուն վկաները, որոնց մի մասն օժտված է հրաշագործություններով, բժշկելու և դարմանելու զորությամբ. *«Ժամանակ ինչ ժամահար եղէ եւ տեսի զօրութիւն սուրբ Աւետարանիս, որ բազմաց ականատես իսկ են եղեալ բժշկութիւն սորա, որ կոչի Վիշապկենց Աւետարան»* («Զորավոր» Ավետարանի կազմողի հիշատակարանից, էջ 242ա):

Այս վկայությունը վերաբերում է «Զորավոր» անունը կրող Ավետարանին, որը հրաշագործությամբ բժշկում է հիվանդներին:

Գովելի է «Զորավոր Ավետարանը» աշխատության նախաձեռնումը: Այս ուսումնասիրությունը պատմական անցքերի անփոխարինելի շտեմարան է և ընթերցվում է բավականին հետաքրքրությամբ: Ալբոմում ամփոփված են Ավետարանի ստեղծման և նրան բաժին ընկած «փորձությունների», տեղահանումների հետաքրքաշարժ պատմությունները, որոնք ընթերցողին մտովի տանում են ետ՝ հեռու-հեռուներ՝ մասնակիցն ու ականատեսը դարձնելով զորավոր գրքի հետ առնչվող հետաքրքրաշարժ իրադարձություններին: Առավել ուշագրավ են մասնագետների կողմից ներկայացված ուսումնասիրությունները, որոնք վերաբերում են Ավետարանի «Զորավոր» կոչվելու ավանդությանը, հիշատակարաններին, գրչական և մանրանկարչական առանձնահատկություններին:

Մեր օրհնությունն ենք բերում այս արժեքավոր ալբոմ-աշխատության հեղինակներին և հայցում Բարեխնամ Աստծո զորակցությունն ու աջակցությունը՝ հայոց մտավոր անդաստանների ոսկյա էջերը կյանքի կոչելու սրբազնագույն գործում:

Ջերմագին սիրով և օրհնությամբ՝
ՆԱՎԱՍԱՐԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԿՃՈՅԱՆ

ՀՏԴ 09 : 27
ԳՄԴ 76.11 + 86.37
Հ 422

Հրատարակվում է օրհնությամբ՝ Արարատյան Հայրապետական Թեմի Առաջնորդական Փոխանորդ
Տ. Նավասարդ Արք. Կճոյանի

Նախաձեռնությամբ՝ Զորավոր Ս. Աստվածածին եկեղեցու հոգևոր հովիվ
Տ. Գրիգոր քահանա Գրիգորյանի

Մեկենասությամբ՝ ***Գեղամ և Արամ Ղուկասյանների.***

Ի հիշատակ վաղամեռիկ ծնողների՝
Էդիկ Ղուկասյանի և Ջուլիետա Բեգլարյանի

Խմբագիր՝ ***Գևորգ Տեր-Վարդանյան***
Մաշտոցյան Մատենադարանի գլխավոր ավանդապահ

Հարությունյան Ա., Սիմոնյան Ա.
Հ 422 Զորավոր Ավետարանը. պատկերագիրք-ուսումնասիրություն/
Ա. Հարությունյան, Ա. Սիմոնյան.- Եր.: Նահապետ, 2016, 64 էջ:

«Զորավոր Ավետարանը» խորագիրը կրող սույն աշխատությունը նվիրված է Մաշտոցյան Մատենադարանի Հ^{մր} 4060 «Ավետարան» ձեռագրին, ուր փորձ է արվում առաջին անգամ հանգամանալի քննության ենթարկել գրչագրի ստեղծման, ապա տարբեր վայրեր փոխադրվելու պատմությունը: Հատուկ ուշադրություն է դարձվել Ավետարանի կազմի նկարագրությանը, գրչարվեստին ու մանրանկարչությանը: Ուսումնասիրությանը կից տրվում է նաև ձեռագրի ընդարձակ նկարագրությունը:

ՀՏԴ 09 : 27
ԳՄԴ 76.11 + 86.37

ISBN 978-9939-856-22-3

© Զորավոր Ս. Աստվածածին եկեղեցի, 2016
© Հարությունյան Արսեն, 2016
© Սիմոնյան Արփինե, 2016

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Մաշտոցյան Մատենադարանի ձեռագրական հավաքածուն հայ ժողովրդի պատմության հոգևոր ու մշակութային արժեքների անմիջական խտացումն է: Միջնադարի տարբեր շրջափուլերում՝ Մաշտոցյան գրերով կերտված տարաբնույթ բովանդակության ձեռագիր մատյաններն ստեղծվել են Հայաստանի ու նրա սահմաններից դուրս գտնվող շուրջ 1500 գրչակենտրոններում. վերջիններս հիմնականում գործել են վանական համալիրներին, եկեղեցիներին ու դպրոցներին կից, ինչով էլ պայմանավորված՝ գրիչներն ու ծաղկողները մեծ մասամբ հոգևորականներ են եղել:

Մատենադարանի մի շարք ձեռագրեր հայտնի են իրենց գրչական ու մանրանկարչական արվեստի բացառիկ կատարելությամբ, ինչպես օրինակ՝ Թորոս Ռոսլինի, Մարգարեի, Գրիգոր Ծաղկողի, Մոմիկի, Թորոս Տարոնացու, Սարգիս Պիծակի և ուրիշների նկարազարդած ձեռագրերը (ՄՄ ձեռ. Հ^{մր} 206, 2743, 5786, 6288, 6792, 10450 և այլն), որոշներն էլ հայտնի են դարձել իրենց զորությամբ, հրաշագործությամբ, բժշկելու կարողությամբ, ըստ այդմ էլ «մկրտվել» են նաև «հրաշագործ», «խնդրակատար», «զորավոր» և այլ անուններով:

Մատենադարանի՝ Հ^{մր} 4060 «Զորավոր» անունն ստացած Ավետարանին է նվիրված մեր սույն պատկերագիրք-ուսումնասիրությունը, որը վերջին տարիներին, Արարատյան հայրապետական թեմի փոխանորդ Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի օրհնությամբ, Ս. Մովսես Տաթևացի հայրապետի հիշատակության օրը՝ մայիսի 14-ին, Մաշտոցյան Մատենադարանից տարվում է Զորավոր Ս. Աստվածածին եկեղեցի՝ հնարավորություն ընձեռելով հավատացյալներին հաղորդվելու ու զորություն ստանալու Ս. Ավետարանից:

2015 թ. մայիսի 14-ին, Ս. Մովսես Տաթևացի հայրապետի հիշատակության ու Հոգեգալստյան տոնի օրը, երբ «Զորավոր» Ավետարանը հերթական անգամ Զորավոր Ս. Աստվածածնի Ս. Սեղանին էր, եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Գրիգոր քահանա Գրիգորյանի առաջարկով նախաձեռնեցինք Ավետարանի մասին ամփոփ մի աշխատություն կազմել, որի նպատակն է հանրությանն ու հավատացյալներին հաղորդակից դարձնել՝ մինչ օրս պատշաճ ուշադրության չարժանացած մագաղաթյա հուշարձանի ստեղծման ու տարբեր վայրեր փոխադրվելու պատմությանը, գրչարվեստին, մանրանկարչությանը, հիշատակարաններին և, վերջապես, «Զորավոր» կոչվելու ավանդությանը:

ՁՈՐԱՎՈՐ ԱՎԵՏԱՐԱՆԸ
(Մաշտոցյան Մատենադարանի ձեռ. Հ՝մր 4060)

Ա. «Ձորավոր» Ավետարանի ստեղծման ժամանակն ու հիշատակարանները: «Ձորավոր» Ավետարանի և կիլիկյան նշանավոր՝ «Սմբատ Գունդստաբլի» Ավետարանի (ՍՄ ձեռ. Հ՝մր 7644) մանրանկարչության ու գրչության բազում ընդհանրությունները թույլ են տվել վաստակաշատ ձեռագրագետ Ա. Մաթևոսյանին ենթադրել, որ առաջինը նույնպես գրվել ու նկարազարդվել է Կիլիկիայում՝ ԺԳ. դարում[1], մինչդեռ ակադ. Լ. Խաչիկյանը, ԺԵ. դարի հիշատակարանների ժողովածուի առաջին հատորում, ձեռագրի հիշատակարանը դնում է Հայոց ՊԾԴ. (1405) թվականի տակ՝ բացատրելով, թե հիշատակարանի գրության ժամանակ Լենկ-Թեմուրը դեռ կենդանի էր, ուստի գրված պետք է լինի մինչև 1405 թ., քանի որ վերջինս մահացել է նշված թվականի փետրվարի 18-ին[2]: Ըստ Լ. Խաչիկյանի՝ ձեռագիրը գրվել է Երևանում, իսկ գրիչը Մանուել եպիսկոպոսն է: Նկատենք, որ համաձայն հիշատակարանի՝ Երևանցի Վիշապի[3] (Ուշապի) որդի Հակոբը դառն ու ծանր ժամանակներում իր «հալալ արդեանց» գնում է ձեռագիրն ու մեկ ձեռք զգեստի և արծաթյա սկիհի հետ միասին ընծայում Երևանի Երկուերեսնի (երկու բեմանոց) եկեղեցուն: Ձեռագրի գնման ու ընծայման այս պատմությունն ամփոփված է մագաղաթյա մատյանի վերջում ավելացված թղթյա երկու էջերի հիշատակարանում (էջ 243ա-4բ)՝ գրված Բջնիի և Այրարատի հաջորդ (առաջնորդ) Մանուել եպիսկոպոսի ձեռքով: Ստացվում է, որ մենք գործ ունենք ձեռագրի ոչ թե գրչության, այլ ստացողի հիշատակարանի հետ և Մանուել եպիսկոպոսի գրչին վերագրել ողջ ձեռագիրը, այնքան էլ համոզիչ չէ[4]:

Մոտավորապես ԺԴ. դարավերջին «Ձորավոր» Ավետարանը տեղափոխել են Երևան, որտեղ էլ Երևանցի Վիշապի ու Ջանանի որդի Հակոբը գնել է այն ու ընծայել Երկուերեսնի կոչվող եկեղեցուն՝ իր, ծնողների, կնոջ ու զավակների հիշատակին: Այդ մասին կարդում ենք հիշատակարանում (մեջբերում ենք հատվածաբար)[5]. ***«Արդ, ես՝ անա[ր]ժանս եւ անպիտանս ի յոքունց եւ ի նմանեաց***

---

[1] ***Ա. Մաթևոսյան,*** Երևանի գրչության կենտրոնները, «Երևանի հոբելյանը». քաղաքի 2750-ամյակի հոբելյանական տարեգրություն, հեղինակ-կազմող՝ ***Ա. Վ. Խաչիկյան,*** Երևան, 1972, էջ 114-115:

[2] ԺԵ. դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն առաջին, կազմեց՝ ***Լ. Ս. Խաչիկյան,*** Երևան, 1955, էջ 49-50:

[3] *Վիշապ* արական անձնանունը ստուգաբանելիս Հր. Աճառյանը հիշատակում է Հակոբ Երևանցուն, որը մի Ավետարան է ստացել ու նվիրել Երևանի եկեղեցուն: Հոր անունով Ավետարանը կոչվել է *Վիշակենց,* այսինքն՝ *Վիշապենց:* Տե՛ս ***Հր. Աճառյան,*** Հայոց անձնանունների բառարան, հ. Ե., Երևան, 1962, էջ 122:

[4] Երևանի պատմությունը շարադրելիս՝ Թ. Հակոբյանը, քաղաքի հուշարձանների կազմում, հիշատակում է նաև Երկուերեսնի եկեղեցին, որտեղ նաև ձեռագրեր են ընդօրինակվել: Հետևելով Լ. Խաչիկյանին՝ նա ձեռագիրը թվագրում է 1405 թվականով և համարում Երևանից մեզ հայտնի ամենահին մատյանը՝ գրված Մանուել եպիսկոպոսի ձեռքով: Տե՛ս ***Թ. Խ. Հակոբյան,*** Երևանի պատմությունը. հնագույն ժամանակներից մինչև 1500 թ., Երևան, 1969, էջ 289:

[5] Հիշատակարանն ամբողջությամբ տե՛ս գրքույկիս վերջում՝ ձեռագրի ընդարձակ նկարագրության մեջ:

իմոց, Յակովբ կոչեցեալ՝ որդի Վիշապին, գեղաքաղաքէս Էրեւանոյ... բարէգութն Աստուած... ընդունելի արար զաղաչանս մեր եւ բերեալ հանդիպեցոյց պատահմամբ ի դրունս մեր զաստուածախաւս ըզքրիստոսայպրաք սուրբ Աւետարանս, ի ձեռն վաճառողաց անգին մարգարտիս... կամաւք Արարչին ստացայ զհոգէփրկանք սուրբ Աւետարանս ի հալալ արդեանց իմոց՝ յիշատակ ինձ եւ ծնողաց ի[մ]ոց եւ ամենայն արեան մերձաւորաց առ ի Քրիստոս ննջեցեալ հաւրն իմոյ՝ Ուշապին եւ մաւր իմոյ՝ Զանանին եւ կենակից իմոյ՝ Մամախաթունին...:

Ես՝ Յակոբս, զաստուածախաւս սուրբ Աւետարանս, եւ մէկ ձեռն ագեստ եւ սկիհ արծաթի, որ ստացա ի հալալ արդեանց իմոց, ընձայեցի Էրեւանո հրաշալի եւ յորդոր ժամատեղացս... ի դուռն սրբոյ Երկուերեսնիս, յիշատակ իւր եւ ամենայն ազգայնոց իւր»[6]*:*



Հատվածներ ստացողի հիշատակարանից, էջ 243ա, 244բ

Ավետարանը գնելիս Հակոբին աջակցել է նրա զոքանչ Էսուգանը. *«Նաեւ ծերացեալ զոքանչին իմո Էսուգանին, որ աւգնական եղեւ ի գին սուրբ Աւետարանիս»*[7]*:*

Մանուել եպիսկոպոսն իր «ստորագրությունը» թողել է հիշատակարանի վերջում՝ հետևյալ չափածո տողերում. *«Զտէր Մանուիէլ՝ համբակ վերջին / Յաջորդ Քրջնոյ ու Այրարադին, / Որ ծրրեցի ծայրօք մատին, / Զյիշատակաց գիծս վերջին...»*[8]*:*

ԺԵ. դարավերջին, ձեռագիրը կազմողի կամ նորոգողի հիշատակարանում, Երկուերեսնի եկեղեցու սպասավոր Ներսես Մոկացին վկայում է, որ ի պատիվ նվիրատուների՝ «Վիշապկենց» կոչվող Ավետարանը հիշյալ շրջանում արդեն հռչակված էր իր զորությամբ և շատերն ականատես էին եղել ձեռագրի բժշկության զորությանը. *«Ժամանակ ինչ ժամահար եղէ եւ տեսի զօրութիւն սուրբ Աւետարանիս, որ բազմաց ականատես իսկ են եղեալ բժշկութիւն սորա, որ կոչի Վիշա[պ]կենց Աւետարան»*[9]*:*

Ներսես Մոկացին տեղեկություններ է հաղորդում նաև ձեռագրի վիճակի մասին, որը. «...քայքայեալ եւ խաղխտե[ա]լ էր», ուստի իր իսկ միջոցներով ձեռագիրը վերստին նորոգել ու կազմել է տալիս՝ ձեռամբ Զաքարիա երեցի. *«ետու հալալ վաստ[ակ]ոց իմոյ վերըստին նորոգել եւ կազմել յիշատակ հոգոյ իմոյ եւ ծնօղաց իմոց...»*[10]*:*

---

[6] ԺԵ. դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն առաջին, էջ 49-50:
[7] Նույն տեղում, էջ 49:
[8] Նույն տեղում, էջ 51:
[9] Նույն տեղում:
[10] Նույն տեղում:



Կազմողի (նորոգողի) հիշատակարանը, էջ 242ա

Այս հիշատակարանը Լ. Խաչիկյանը թվագրում է ԺԵ. դարավերջով՝ նշելով, որ այն գրված է նախորդից տասնամյակներ հետո: Հիշատակարանը վկայակոչելիս, իբրև ձեռագրի նորոգող, նա գրում է Ներսես Մոկացու անունը[11], մինչդեռ վերը նշեցինք, որ Ներսեսը հիշյալ ժամանակաշրջանում եղել է Երկուերեսնի եկեղեցու սպասավորը, որը տեսնելով ձեռագրի անմխիթար վիճակը, Զաքարիա երեցին հանձնարարել է այն նորոգել, հետևաբար, ոչ թե Ներսեսն է ձեռագրի կազմողը, այլ Զաքարիան:

Բ. Ձեռագրի պահպանման վայրերը - Երևանի Երկուերեսնի եկեղեցի: Վերը արդեն նկատեցինք, որ ձեռագրի և՛ ստացողի, և՛ կազմողի հիշատակարաններում վկայված է Երևանի Երկուերեսնի կոչված եկեղեցին, ըստ այդմ էլ տեղին ենք համարում անդրադառնալ երբեմնի գոյություն ունեցած ու շատերին անհայտ այդ եկեղեցուն:

Ա. Մաթևոսյանը, վկայակոչելով ձեռագրի ստացողի հիշատակարանը, ըստ որի՝ Ավետարանը ընծայել են տվյալ եկեղեցուն, հավելյալ տեղեկություն չի հաղորդում: Երկուերեսնի եկեղեցին, Երևանի միջնադարյան հուշարձաններին նվիրված իր մենագրության մեջ չի հիշատակում նաև հնագետ-վիմագրագետ Կ. Ղաֆադարյանը: Եկեղեցու մասին համառոտ տեղեկություն ենք գտնում ԺԷ. դարի պատմագիր Առաքել Դավրիժեցու երկասիրության մաս կազմող Հովհանիսիկ Ծարեցու ժամանակագրության մեջ[12], ուր նկարագրվում է 1583 թ. Մուրադ խոնդկարի[13] հրամանով Ֆահիրադ զորապետի գլխավորությամբ զորքերի հարձակումը Երևանի վրա, որի ժամանակ քաղաքում բազմաթիվ ավերումներ են եղել ու եկեղեցիներ կործանվել. ***«...կամեցան զմեծ եկեղեցին ևս, որ Երկու երեսի ասի, քակել, իսկ ոմն վարդապետ Առաքել անուն, որ և յետոյ կաթուղիկոս եղև, յիշատակ նորին օրհնութեամբ եղիցի, եմուտ առաջի Ֆահրատին զօրապետի զօրուն, և ոչ ետ թոյլ քակելոյ զեկեղեցին»***[14]***:***

[11] Նույն տեղում:

[12] Հովհանիսիկ Ծարեցու ժամանակագրությունն իբրև Առաքել Դավրիժեցու երկի ինքնուրույն ԾԵ. գլուխ առկա է մեզ հայտնի գրեթե բոլոր ձեռագրերում: Այն հրատարակվել է նաև Մ. Մսերյանցի «Ճռաքաղում» (Մոսկվա, 1859), Սամուել Անեցու ժամանակագրությանը կից (Վաղարշապատ, 1893). առանց խորագրի այն կարելի է գտնել նաև ՍՄՀ մր 2776 և Հ մր 8245 ձեռագրերում: Տե՛ս ***Առաքել Դաւրիժեցի,*** Գիրք պատմութեանց, աշխատասիրությամբ ***Լ. Ա. Խանլարյանի,*** Երևան, 1990, էջ 533, ծանոթ. 433:

[13] Խոնդկարը (խոնդքար) թագավորն է, տաճկական սուլթաններին տրվող տիտղոս: Տե՛ս ***Ա. Սարգսյան,*** Արևմտահայերենի բառարան, Երևան, 1991, էջ 154:

[14] ***Առաքել Դաւրիժեցի***, էջ 461:

Երկուերեսնին Երևանի մեծ ու նշանավոր եկեղեցիներից մեկն է եղել, ինչպես ձեռագրի հիշատակարանում էր նշվում «***...Էրեւանո հրաշալի եւ յորդոր ժամատեղացս...»***, սակայն, թե ստույգ որտեղ է այն գտնվել, դժվար է ասել:

Հովհաննես եպիսկոպոս Շահխաթունյանցն իր ուսումնասիրության վեցերորդ մասում զետեղել է Ամենայն Հայոց կաթողիկոսների գավազանագիրքը՝ սկսած Ս. Գրիգոր Լուսավորչից մինչև Հովհաննես Ը. Կարբեցին: Դառնալով Գրիգոր ԺԲ. Վաղարշապատցու (1576-1590) աթոռակից Թադևոս Բ.-ին՝ Շահխաթունյանցը ևս չի շրջանցում Հովհանիսիկ Ծարեցու ժամանակագրության՝ Երկուերեսնի եկեղեցու առնչությամբ վերոնշյալ վկայությունը. «Առաքեալ ի սահմանացն Էջմիածնի կարգի գործակից եւ աթոռակալ Թադէոսի Բ., եմուտ առ Ֆահրատ փաշայ Օսմանցւոց եւ միջնորդեալ ո՛չ ետ փակել զեկեղեցին Երկերես կոչեցեալ յԵրեւան»[15]: Չնայած նրան, որ Գրիգոր Վաղարշապատցու մեկ այլ աթոռակից Առաքել կաթողիկոսի (այն ժամանակ՝ վարդապետ – Ա. Հ.) միջնորդությամբ կանխվեց եկեղեցու քանդումը. «...բայց չկրցաւ արգելել զինուորներուն իրենց ձիերով 30 օր եկեղեցւոյ մէջ բնակիլը»[16]: Հիշյալ դեպքերի հետ կապված ինչպես Առաքել Դավրիժեցու Պատմությանը, այնպես էլ Սամուել Անեցու ժամանակագրությանը կից հրատարակված՝ նույն Ծարեցու ժամանակագրության մեջ կարդում ենք. «... աւուրս Լ. (30) ջորիք և երիվարք և բազում տաճիկք ինքեանց անծանօթք՝ բնակեցան յեկեղեցին: Եւ եղեւ ասացեալն ի մարգարէէն, զի մտին հեթանոսքն ի ժառանգութիւն Աստուծոյ և պղծեցին զտաճար նորա սուրբ»[17]: Փաստորեն, եկեղեցին մի որոշ ժամանակ նաև ապաստարան ու անասնագոմ է ծառայել:

Երևանի Երկուերեսնին հիշատակում է նաև Զաքարիա Ագուլեցին, որն իր օրագրության մեջ անդրադառնում է 1674 թ. Երևանում կատարվելիք ջրօրհնեքին, որի համար. «...ԲԾ. (200) մարդ շապիք ին հաքել... ամայ առօտաց բռնեց ձուն գալն մինչի յետի ժամն: Շատ զգեստ զայ էլաւ... Յին քաղաքի ***Բ. (2) երեսումն*** զգեստավորեցին»[18] (ընդգծումը մերն է – Ա. Հ.): Ագուլեցու հիշատակությունը ևս չի պարզում կառույցի գտնվելու վայրը, այլ միայն փաստում է, որ Երևանն ունեցել է նաև նման եկեղեցի, որն այդ շրջանում կանգուն է եղել: Օրագրության տեղանվանական ցանկում Ս. Տեր-Ավետիսյանը Երկուերեսնին ենթադրաբար նույնացրել է Երևանի Ս. Պողոս-Պետրոս[19] եկեղեցու հետ[20], ինչն այնքան էլ համոզիչ չէ:

---

[15] ***Յովհաննէս եպս. Շահխաթունեանց,*** Ստորագրութիւն Կաթուղիկէ Էջմիածնի եւ հինգ գաւառացն Արարատայ, աշխ. ***Ա. Տեր-Ստեփանյանի,*** Ս. Էջմիածին, 2014, էջ 151:

[16] ***Մաղաքիա արք. Օրմանյան,*** Ազգապատում, Բ. հատոր, Ս. Էջմիածին, 2001, էջ 2650:

[17] ***Սամուէլի քահանայի Անեցւոյ*** հաւաքմունք ի գրոց պատմագրաց յաղագս գիւտի ժամանակաց անցելոց մինչեւ ի ներկայս, յառաջաբանով, համեմատութեամբ, յաւելուածներով եւ ծանօթութիւններով ***Ա. Տէր-Միքելեանի,*** Վաղարշապատ, 1893, էջ 192, տե՛ս նաև ***Առաքել Դաւրիժեցի***, էջ 461:

[18] ***Զաքարիա Ագուլեցու*** Որագրությունը, Յերեվան, 1938, էջ 120-121:

[19] Երևանի Ս. Պողոս-Պետրոս եկեղեցին գտնվել է հին Երևանի *Շիար* կոչվող թաղամասի կենտրոնում. կառուցված էր 1679 թ. երկրաշարժից կործանված նույնանուն եկեղեցու տեղում: Այն բազիլիկ հորինվածքով կառույց է եղել, որն ունեցել է արևմուտքից կից զանգակատուն: Եկեղեցին քանդել են 1931 թ. և տեղում կառուցել ներկայիս «Մոսկվա» կինոթատրոնի շենքը: Մանրամասն տե՛ս ***Կ. Ղաֆադարյան,*** Երևան. միջնադարյան հուշարձանները և վիմական արձանագրությունները, Երևան, 1975, էջ 28-33:

[20] ***Զաքարիա Ագուլեցի***, էջ 179:

Եկեղեցիների նույնացման այս հարցը քննության է առել նաև Թ. Հակոբյանը: Նա նախ նշում է, որ Ս. Նշան կոչված Երկուերեսնին, հավանաբար, ԺԲ-ԺԴ. դդ. կառույց էր, որը 1679 թ. երկրաշարժից հետո չի հիշատակվում: Եկեղեցին հաճախ նույնացվել է Երևանի Ս. Պողոս-Պետրոս կամ քաղաքի այլ եկեղեցիների հետ, իսկ Երկուերեսնի է կոչվել պարզապես երկու բեմ ունենալու պատճառով[21]: Թ. Հակոբյանը վկայակոչում է նաև Հ. Ժամկոչյանի ատենախոսական աշխատանքում արծարծված այն միտքը, թե նշված երկու եկեղեցիների նույնացումն անվիճելի պետք է համարել՝ հիմք ընդունելով Ս. Պողոս-Պետրոսի քանդման ժամանակ պատերի ստորին շերտում հայտնաբերված «ֆրեսկոները», ինչպես նաև ֆրանսիացի ճանապարհորդ Ժան Շարդենի այն վկայությունը, թե Երկուերեսնի եպիսկոպոսանիստ եկեղեցու դիմաց գտնվելիս է եղել մի մզկիթ, որն ըստ Հ. Ժամկոչյանի՝ նկարիչների միության կողմից ցուցահանդեսների համար օգտագործվող մզկիթն է[22]:

Ըստ Թ. Հակոբյանի՝ Հ. Ժամկոչյանի պնդումը իրատեսական կլիներ, եթե Շարդենն անուղղակի կերպով չճշտեր Երկուերեսնի եկեղեցու տեղը քաղաքում, որը Ս. Պողոս-Պետրոսից բավական հեռու էր, գտնվում էր մեծ շուկա-հրապարակի մոտ, որի դիմաց կառուցված է եղել նաև մի բարձր աշտարակ: Այս հանգամանքը նկատի առնելով՝ նա չի ընդունում Հ. Ժամկոչյանի տեսակետը և հավանական է համարում, որ «Երկուերեսնի ս. Նշան հին եկեղեցին գտնվում էր հետագայում կառուցված Ս. Սարգիս եկեղեցու (որն այժմ ևս գոյություն ունի) տեղում կամ նրա մոտակայքում և կապ չունի Պողոս-Պետրոսի հետ»[23]:

Երևանի պատմությանը նվիրված ուսումնասիրություններում Երկուերեսնի եկեղեցուն առավել խորը անդրադարձել են Երվանդ Շահազիզը, ապա Թադևոս Հակոբյանը: Նկարագրելով Զորագյուղի անապատի տեղագրությունն ու համալիրի մեջ մտնող շինությունները՝ Շահազիզը նշում է, որ կաթողիկոսների իջևանատան հարևանությամբ, որ ներկայիս առաջնորդարանի տեղն է. «...շինված ե յեղել ս. Գեորգ անունով կաթուղիկոսական յեկեղեցին, կառուցված վաղ ժամանակներից և հիմնովին վերանորոգված Դավիթ Եռեգեթցի (1801–1807 թթ. – Ա. Հ.) կաթուղիկոսի ձեռքով...»[24]: Շահազիզը միաժամանակ նկատում է, որ ըստ Ժան Շարդենի՝ «...յեպիսկոպոսական յեկեղեցին յեղել ե վոչ վերոհիշյալ ս. Գեորգը, այլ ***«Յերկուերեսնի» կոչված ս. Նշանը,*** վորի անունը հաճախ հիշվում ե մեր հին ձեռագրերի հիշատակարաններում»[25] (ընդգծումը մերն է – Ա. Հ.):

---

[21] ***Թ. Խ. Հակոբյան,*** Երևանի պատմությունը. հնագույն ժամանակներից մինչև 1500 թ., էջ 270:

[22] Նույն տեղում, էջ 271:

[23] Նույն տեղում (հմմտ. Путешествие ***Шардена*** по Закавказью в 1672-1673 гг., перевод Е. В. Бахумовой и Д. П. Косовича, Тифлис, 1902, с. 242-243):

[24] ***Յերվանդ Շահազիզ,*** Հին յերեւանը, Յերեւան, 1931, էջ 200-201(այսուհետև՝ Շահազիզ):

[25] Նույն տեղում, էջ 201: Հետևելով Շարդենին՝ Երկուերեսնին առաջնորդարանի եկեղեցի է կոչում նաև Հ. Ղևոնդ Ալիշանը. «Նոյն ճանապարհագիր (Շարտէն) վկայէ, զի եկեղեցի առաջնորդարանին էր կոչեցեալ Երկուերեսնի, որ և ընդ այլս ոմանս յիշի յամէ 1537, Երկուերեսնի Սուրբ Նշան կոչմամբ. յորմէ յայտնի նուիրեալ Սրբոյ Խաչի, կամ պահեալ ի նմին համանուն խաչի. թուի թէ և թաղն սոյնպէս անուանէր՝ Երկուերեսու»: ***Հ. Ղևոնդ Ալիշան,*** Այրարատ. բնաշխարհ Հայաստանեայց, Վենետիկ, 1890, էջ 311:

Գրիգոր Դարանաղցու կամ Կամախեցու ժամանակագրության համաձայն՝ Երևանի Երկուերեսնի եկեղեցին բնավ էլ չի նույնանում Ջորագյուղի Ս. Գևորգ եկեղեցու հետ: ԺԷ. դարասկզբին գալով Երևան՝ Գրիգոր Դարանաղցին նախ իջևանել է Ջորագյուղի անապատում, ի մասնավորի՝ Ս. Սարգիս եկեղեցում. «Եւ մեք այլ յորժամ գնացաք ի Սուրբ Սարգիս եկեղեցին, որ ի վերայ գետոյն Հրազդանին էր, յայնժամն ոնց երկու օր անցաւ ի վերայ...»[26], ապա Երկուերեսնի եկեղեցում. «Ի միւսում աւուրն ելեալ էր ի բանտէն Մելքի կատողիկոսն եւ լուեալ էր զմեր արարմունքն եւ եկն առ մեզ յԵրկու երեսէն եկեղեցին»[27]: Շահազիզը ենթադրում է, թե Երկուերեսնի եկեղեցու մոտ ևս, ըստ ամենայնի, իջևանելու կամ բնակվելու տեղ է եղել երթևեկ հոգևորականների համար, սակայն, նրան նույնպես հայտնի չէ եկեղեցու գտնվելու ստույգ վայրը. ***«Թե քաղաքի վոր մասում և հատկապես վորտեղ ե շինված յեղել այդ Յերկուերեսնին, վորի անունով և նրա քաղը կոչվել ե «Յրկուերեսնի քաղ» մենք ստուգապես չենք կարող ասել»[28]:*** Վկայակոչելով ճարտարապետ Թ. Թորամանյանի տեսակետը՝ նա նշում է, որ Երևանի երբեմնի ամենանշանավոր Երկուերեսնի Ս. Նշան եկեղեցին կառուցված է եղել Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու (1869-1900 թթ.) տեղում[29]: Թ. Թորամանյանի վերոնշյալ կարծիքը հետագայում կրկնում է նաև Առաքել Դավրիժեցու Պատմությունն աշխարհաբար թարգմանող Վ. Առաքելյանը՝ ծանոթագրություններում գրելով հետևյալը. ***«Երևանում եղել է մի մեծ եկեղեցի, որ կոչվել է Երկուերեսի: Թորամանյանի կարծիքով այդ եկեղեցին եղել է Չարենցի այժմյան դպրոցի տեղում, որտեղ գտնվում էր Ս. Գրիգոր Լուսավորիչը: Վերջինը շինված է եղել Երկուերեսի տեղում»[30]:***

Եկեղեցու ավերման ստույգ ժամանակը ևս հայտնի չէ: Շահազիզի համոզմամբ՝ այս եկեղեցին Երևանի մյուս հուշարձանների պես կործանված կամ խարխլված պիտի լինի 1679 թ. հունիսի 4-ին տեղի ունեցած ավերիչ երկրաշարժից, սակայն հետագա տարիներին այստեղ գրված կամ եկեղեցուն ընծայված ձեռագրերը փաստում են, որ շատերի պես այն ևս վերանորոգվել է: Բերված վկայությունները թեև լուսաբանում, սակայն, բնավ չեն որոշակիացնում Երևանի երբեմնի մեծ ու նշանավոր եկեղեցու գտնվելու ստույգ վայրը:

Ինչպես վերը նշվեց, Երկուերեսնի եկեղեցու մասին վկայություններ են պահպանվել նաև ձեռագրերի հիշատակարաններում: Ե. Շահազիզը վկայակոչում է

---

[26] Ժամանակագրութիւն Գրիգոր վարդապետի Կամախեցւոյ կամ Դարանաղցւոյ, հրատարակեց՝ ***Մեսրոպ վարդապետ Նշանեան,*** Երուսաղէմ, 1915, էջ 55:

[27] Նույն տեղում, էջ 56: Գր. Դարանաղցու վկայություններից մեկը, որը հիշատակում է նաև Թ. Հակոբյանը, Երկուերեսնի եկեղեցու ճարտարապետական հորինվածքի տեսակետից ուշագրավ տեղեկություն է: Ժամանակագիրը նկարագրում է թուրքերի հեռանալը Եղվարդ գյուղից, որի ժամանակ այրել են տեղի վանքը. «...որ զարմանալի չէնք ունէր, որ Երեւանու Երկերեսին կու նմանէր»: Ժամանակագրութիւն Գրիգոր վարդապետի Կամախեցւոյ, էջ 579: Տե՛ս նաև ***Թ. Խ. Հակոբյան,*** Երևանի պատմությունը (1500-1800 թթ.), Երևան, 1971, էջ 364:

[28] ***Շահազիզ,*** էջ 201:

[29] Նույն տեղում:

[30] ***Առաքել Դավրիժեցի,*** Պատմություն, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները՝ ***Վ. Առաքելյանի,*** Երևան, 1988, էջ 552, ծանոթ. 252:

1481 թվակիր (ձեռագրի գրչության թվականն է՝ ՉՀԴ.–1325 – Ա. Հ.) Ավետարան ձեռագրի (պետ. թանգարանի Հ^{մր} 94, այժմ՝ Էրմիտաժի ձեռ. Հ^{մր} V3–834[31]) հիշատակարանի վերջում՝ հետագայում ավելացված մի տեղեկություն, ըստ որի՝ երևանցիները որոշակի հարկ են վճարել իրենց եպիսկոպոսական ու Մայր եկեղեցուն, որով պահպանվել է Ձորագյուղի անապատի իջևանատունը. ***«Մեք՝ Երեւանու Դալլաթաւորք եւ ռամիկ ժողովուրդս, երկու երեսու բարձր հրամանաւ զքահանայի Էջեւանն զհարկն և զպահանջն ինչ ռամիկ ժողովուրդ, որ հակառակ լինի Սբ. Աւետարանս նորա դատախազ լինի անեծքն ընդ Կա[յ]ենի առցէ»[32]:***

Մաշտոցյան Մատենադարանի Հ^{մր} 246, Երևանում՝ 1684 թ. գրված «Աւետարան» ձեռագրի հիշատակարանում կարդում ենք. ***«Եւ արդ, ես՝ յետինս գրչաց և անարժանս ի քահանայից, սուտանուն Աւետիս էրէցս, և տեսի զսէր և զփափագ Խանփարուս, յանձն առի գծագրել, այլ կարողութեամբն Աստուծոյ աւարտեցի զսա ի քաղաքս իմ յԷրևան, ընդ հովանեաւ Սուրբ Յակոբ հայրապետիս և Սուրբ Սարգիս, Սուրբ Էրկու Յէրէսիս և Սուրբ Կաթուղիկէնիս, ի հայրապետութեան տեառն Եղիազարու և առաջնորդութեան Սուրբ Ամենափրկչի Լեհեցի Յովանէս վարդապետի, ի դանութեան քաղաքիս Զալխանիս, ի թվականիս Հայոց ՌՃԼԳ. (1684)»[33]:*** 1684 թվակիր հիշատակարանը, որն ի թիվս Երևանի նշված եկեղեցիների՝ գրվել է նաև «ընդ հովանեաւ» Ս. Երկուերեսնի, եկեղեցու՝ տվյալ ժամանակաշրջանում գոյություն ունենալու ուղղակի վկայությունն է: Մատենադարանի մեկ այլ՝ Նահապետ կաթողիկոսի պատվերով 1695 թ. Էջմիածնում գրված Հ^{մր} 1534 «Յայսմաւուրք» ձեռագրի ծավալուն հիշատակարանում, նշյալ կաթողիկոսի իրականացրած բարենորոգչական աշխատանքների թվում վկայված է նաև Երևանի Երկուերեսնին. ***«...ի թուին ՌՃԽ. (1691) վաղճանեցաւ սուրբ հայրն հոգեւոր Եղիազար կաթողիկոսն, եւ յաջորդեաց զԱթոռսն հայրապետական երջանկամեծար եւ սրբազան հայրապետս տէր Նահապետ կաթողիկոս, որ եւ ջանք ի վերայ եղեալ՝ արար աշխատանս եւ շինուածս բազումս ի վերայ առաջնոց շինուածոցն՝ թէ՛ Սրբոյ Աթոռոյս եւ թէ՛ ամենայն եկեղեցեաց Քրիստոսի: ...Այլ եւ զտաճարն Անապատին Անանիայի առաքելոյն, որ ի միջի այգեացն Երեւանայ քաղաքին, նոր վերստին ի հիմանէ կառոյց ամենայն շինուածօքն, որ ի նմա: Նաեւ զերկու եկեղեցիսն քաղաքին Երեւանայ, այսինքն՝ զԵրկու երեսին կոչեցեալ եւ զԿաթուղիկէ անուանեալ, որք ի շարժմանէն ի հիմանէն իսպառ բլեալք էին, վերստին ի հիմանէ կառոյց գեղեցիկ շինուածօք»[34]:*** Բավականին ուշագրավ հիշատակարանն ուղղակիորեն հավաստում է Շահազիզի վերոնշյալ տեսակետը, համաձայն որի՝ մեծ երկրաշարժից

[31] Սանկտ-Պետերբուրգի պետական Էրմիտաժի հայերեն ձեռագրական հավաքածուի նշված ձեռագիրը Ախալցխայի Ս. Փրկիչ եկեղեցու գրչագրերից է, որը նախորդ դարի քսանական թվականների սկզբին փոխադրվել է Երևանի Պատմության թանգարան (Հ^{մր} 94), 1935-ին՝ Կերպարվեստի թանգարան (Հ^{մր} 17), իսկ 1940-ին ՀՍԽՀ Ժողկոմսովետի որոշմամբ հանձվել Էրմիտաժին: Տե՛ս ***Օննիկ Եգանեան,*** Աշխատութիւններ, հրատարակութեան պատրաստեց՝ ***Գ. Տէր-Վարդանեան,*** Երեւան, 2014, էջ 119:

[32] ***Շահազիզ,*** էջ 202:

[33] Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Ա., կազմեցին՝ ***Օ. Եգանյան, Ա. Ջեյթունյան, Փ. Անթաբյան,*** Երևան, 1984, էջ 1070:

[34] Նույնի հ. Ե., կազմեց՝ ***Օ. Եգանեան,*** Երևան, 2009, էջ 394-395:

Ջորավոր Ս. Աստվածածին եկեղեցին, 1693-1694 թթ.

հիմնովին ավերվել են նաև Երևանի Երկուերեսնին ու Կաթողիկեն, որոնք ԺԷ. դարավերջին վերստին կառուցել է Նահապետ Եղեսացի կաթողիկոսը:

Գ. Ջորավոր Ս. Աստվածածին եկեղեցի: Ձեռագրի հետագա «ճակատագիրը» կապված է Երևանի՝ քննության ենթակա Ավետարանի անունով կոչվող Ջորավոր Ս. Աստվածածին եկեղեցու հետ:

Ենթադրելի է, որ Երկուերեսնի եկեղեցու ավերումից կամ անշքանալուց հետո ձեռագիրը հանգրվանել է Ս. Անանիա առաքյալի մատուռի տեղում՝ Մովսես վարդապետ Տաթևացու (հետագայում կաթողիկոս՝ Մովսես Գ. Տաթևացի – 1629-1632) հիմնած համանուն վանքում, ուր ներկայումս Ջորավոր Ս. Աստվածածին եկեղեցին է՝ կառուցված Նահապետ Ա. Եղեսացի (1691–1705) կաթողիկոսի օրոք՝ 1693-1694 թթ., խոջա Փանոսի միջոցներով:

Եկեղեցու պատմությունը շարադրելիս՝ Երվանդ Շահազիզը նկատում է, որ տևական ժամանակ այստեղ պահվող մի հրաշագործ ձեռագիր Ավետարանի պատճառով Ս. Աստվածածինը կոչվել է նաև Ս. Ջորավոր[35]: Նա նշում է նաև, որ 1835 թ. եկեղեցին կամ Ս. Անանիայի անապատը դադարել է լինել մենաստան ու դարձել է ծխական եկեղեցի՝ հանձնվելով Մարաղայի գաղթականներին: Հենց մարաղացիների խոսակցական լեզվում էլ ընդհանրացվել է եկեղեցուն՝ Ս. Ջորավոր կոչելու սովորությունը: Իբրև օրինակ՝ Շահազիզը բերում է ժողովրդի կողմից հաճախ լսվող հետևյալ խոսքերը. ***«էն սուրբ Ջորաւորը վկայ, էն սուրբ Ջորաւորը***

[35] ***Շահազիզ,*** էջ 191: Տե՛ս նաև ***Թ. Խ. Հակոբյան,*** Երևանի պատմությունը (1801-1879 թթ.), Երևան, 1959, էջ 251-252:

գիտենայ», այսինքն՝ այդտեղ պահվող Զորավոր Ավետարանը վկա, գիտենա, քանի որ մինչ ծխական եկեղեցի դառնալը վանքն առավել հայտնի է եղել իբրև Ս. Անանիա առաքյալի անապատ[36]:

Եկեղեցու պատմությունն ու հատկապես վիմական արձանագրություններն առավել հանգամանալի քննության է ենթարկել Կ. Ղաֆադարյանը[37]: Եկեղեցու անվանումը նա բացատրում է այսպես. ***«Այժմյան եկեղեցու բուն անունը, ինչպես գիտենք արձանագրություններից և մատենագրական աղբյուրներից, Աստվածածին է, իսկ Զորավոր անունը նա ստացել է հետագայում, այնտեղ պահվող մի ձեռագիր մատյանի անունից, որ հրաշագործ և զորավոր է համարվել»***[38]***:*** Ավետարանի մասին հավելյալ տեղեկություն Կ. Ղաֆադարյանը չի հաղորդում: Զորավոր Ս. Աստվածածին եկեղեցին Երևանի առավել հայտնի սրբավայրերից է, որը հռչակված է նաև իր «զորությամբ»՝ ի նշանավորումն «Զորավոր» Ավետարանի:

Անհայտ պատճառներով Ավետարանը հետագայում տարվել է Արտազի Ս. Թադեոս առաքյալի վանքը և միայն 1911 թ. բերվել Էջմիածին, ապա՝ Երևան (1939 թ.), բայց այս անգամ, ինչպես Ա. Մաթևոսյանն է նշում, ձեռագիրն իր տեղն է գտնում ոչ թե. ***«...ի դուռն Երկուերեսնի եկեղեցում, որ վաղուց հողին էր հավասարվել, ոչ էլ իր անունը կրող եկեղեցում, այլ «ընդ հովանեաւ» Մաշտոցյան Մատենադարանի, հպարտ իր կեսհազարամյա երևանաբնակությամբ...»***[39]***:***

Մենք ունենք նաև «Զորավոր» Ավետարանի ստեղծմանը վերաբերող բանավոր ավանդություն, ըստ որի՝ Ավետարանը գրվել է Սևանի անապատում և թշնամու ասպատակություններից մեկի ժամանակ հայտնվելով լճում՝ Հրազդան գետով հասել է մինչև Երևան: Այստեղ այն գտել է մի կին ու նվիրել Ս. Անանիա առաքյալի անապատին, որտեղ Ավետարանը մնացել է մինչև ԺԹ. դարավերջ[40]:

Ամփոփելով «Զորավոր» Ավետարանի ստեղծման, ապա տարբեր միջավայրերում հանգրվանելու վերաբերյալ տեղեկությունները, կարելի է արձանագրել, որ ամենայն հավանականությամբ, կիլիկյան դպրոցի՝ ԺԳ-ԺԴ. դդ. ծնունդ ձեռագիր Ավետարանը մոտավորապես ԺԴ. դարավերջին կամ ԺԵ. դարասկզբին գնել է Երևանցի Հակոբն ու ընծայել Երևանի Երկուերեսնի կոչվող եկեղեցուն, որտեղից էլ, հավանաբար, ԺԸ. դ. սկզբներին այն հասել է Զորավոր Ս. Աստվածածին եկեղեցի ու մնացել այստեղ մինչև ԺԹ. դ. կեսերը:

«Զորավոր» Ավետարանը, թերևս, Մատենադարանի այն եզակի ձեռագիրն է, որն իր անունով օժտել է նաև Երևանի Ս. Աստվածածին եկեղեցուն՝ տևական ժամանակ այդտեղ մնալու պատճառով: Ուրախությամբ պետք է փաստենք, որ ձեռագիրն այսօր իր նման հազարավոր մատյանների կողքին է և իր ուրույն տեղն ունի Մաշտոցյան Մատենադարանի հավաքածուում:

---

[36] ***Շահազիզ,*** էջ 192:

[37] ***Կ. Ղաֆադարյան,*** Երևան. միջնադարյան հուշարձանները և վիմական արձանագրությունները, Երևան, 1975:

[38] Նույն տեղում, էջ 37:

[39] ***Ա. Մաթևոսյան,*** Երևանի գրչության կենտրոնները, էջ 115:

[40] Տաթևացուց մինչև Տաթևացի, աշխատասիրությամբ՝ ***Աշոտ դպիր Արևշատյանի,*** Երևան, 2002, էջ 69:

Դ. Ձեռագրի կազմը: Մինչ մանրանկարչությանն անցնելը՝ նշենք, որ պակաս ուշագրավ չէ նաև ձեռագրի կազմը, որը շագանակագույն դրոշմազարդ կաշի է՝ դռնակով և երբեմնի ունեցած երեք կապիչներով, որոնցից միայն ամրացման գամերն են մնացել: Արտաքին փեղկը հարդարված է 59 մեծ և 32 փոքր կոստղերով՝ կիսակլոր գլխով գամերով (14-ն ընկած, որոնցից մի քանիսի հիմք գամերը պահպանվել են) ու 6 փլաքներով, իսկ կենտրոնում ամրացված է մետաղյա խաչ՝ հետևյալ մակագրությամբ.



Յ[Ի]Շ[ԱՏԱ]Կ Է ՍԲ Խ[Ա]ՉՍ
ԱՌ[Ա]ՔԵԼԻՆ ԵՒ Կ[Ո]Ղ[Ա]ԿՑԻՆ՝
ՈՒՂՈՒՐՍՕԼԹ[Ա]ՆԻՆ ԵՒ ԴՍՏԵՐԱՑՆ՝
ՍԷՎ[Ա]ՐԽ[Ա]ՆԻ[Ն],
ՕՂԼԱՆՓ[Ա]ՇԻՆ, ՄԱՐԻ[Ա]ՄԻՆ:

Վկայված անձնանուններից մի քանիսն ուշագրավ են ու սակավադեպ: *Ուղուրսօլթան* ծագումով թուրքերեն իգական անձնանունը կազմված է *ուղուր* (բարեհաջողություն) + *սուլթան* (թագավոր) բառերից և մեզանում հիշատակված է ԺԶ. և հետագա դարերում, մասնավորապես՝ Հր. Աճառյանը վկայակոչում է 1581 և 1597 թվակիր ձեռագրերից երկու օրինակ, որոնցում նշված անձնանունը հանդի-պում է *Յիւղուրսուլթան* և *Իւղուր սուլթան* անվանաձևերով[41]: Ինչ վերաբերում է *Սէվարխան* անձնանվանը, ապա կարծում ենք, որ այն *Սեվլի, Սալվիխան, Սալվիփաշա* իգական անունների փոխակերպված ձևն է, ծագում է թուրք. sevli (նոճի) + պարս. xān (իշխան) բառերից, որն ունեցել է թե՛ արական, և թե՛ իգական գործածություն[42]: *Օղլանփաշա* ծագումով թուրքերեն իգական անձնանունը կազմված է oγlan (տղա, որդի) + paša (փաշա) բառերից և դարձյալ հանդիպում է ԺԶ. և հետագա դարերում[43]:

Արսեն Հարությունյան
պատմական գիտ. թեկնածու
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ,
Մատենադարանի ձեռագրագիտության
և Մայր ցուցակի բաժնի գիտաշխատող

[41] ***Հր. Աճառյան,*** Հայոց անձնանունների բառարան, հ. Դ., Երևան, 1948, էջ 201:

[42] Նույն տեղում, էջ 347, 482:

[43] Նույնի հ. Ե., էջ 234:

Ե. «Զորավոր» Ավետարանի մանրանկարչությունը: Ձեռագիրն արժեքավոր է նաև մանրանկարչական հարդարանքի տեսանկյունից: Այստեղ մենք գործ ունենք ավետարաններին հատուկ մանրանկարչական այնպիսի տարրերի հետ, ինչպիսիք են խորաններն ու կիսախորանները, ավետարանիչների մանրանկարներն ու անվանաթերթերը, լուսանցային մանրանկարները, լուսանցազարդերն ու զարդագրերը:

Խորան. Ավետարանի սկզբում զետեղված եկեղեցական պատմագիր Եվսեբիոս Կեսարացու (մոտ 265-339 թթ.) թուղթը Կարպիանոսին և նրա կազմած չորս ավետարանների համաբարբառներն (համաձայնության տախտակները) իրենց խորանակերպ (կամարաձև) ձևավորման համար հայ մատենագրության մեջ կոչվում են խորաններ: Քննվող ձեռագրում ամբողջությամբ պահպանվել է միայն Կարպիանոսին պատկերող խորանը, որին հաջորդող ութ խորանների մեջ համաբարբառային տասը կանոններն են: Խորանը խորհրդանշում է Ավետարանի մուտքը, և ինչպես Վանական Վարդապետի մեկնության մեջ է նշվում, խորաններն իրենց պայծառ գույներով Ավետարանում զետեղված մտավոր գանձերի նախադուռն են[44]: Գլխազարդի կենտրոնում՝ կապույտ խորքի վրա, պատկերված է սևահեր և կարճ մորուքով Կարպիանոսը՝ ոսկեզօծ լուսապսակով և բաց մագաղաթի գալարը ձեռքին (էջ 2ա): Կարպիանոսի դիմանկարը զետեղված է կամարի տակ, խորանները երկսյուն են, խարիսխներում պատկերված են մեկական առյուծներ: Խորանների նման կենդանակերպ նկարազարդումը բնորոշ է «Սմբատ Գունդստաբլի» Ավետարանի խորաններին, որտեղ կենդանակերպ են խոյակները[45]: Ճակատազարդի վերին զույգ անկյունագլուխներին պատկերված են բուսազարդերից կազմված եղջյուրներ, որոնց կենտրոնում՝ սկիհի շուրջ, առկա են երկու դիմահայաց սիրամարգեր: Անտիկ ժամանակաշրջանում տարածված էր այն պատկերացումը, թե սիրամարգի մարմինը չի փտում, և ելնելով դրանից՝ հեթանոսները նրան դիտում էին որպես անմահության, իսկ քրիստոնյաները՝ Քրիստոսի Հարության խորհրդանիշ: Խորանների մեկնություններում հիշյալ թռչունները բնութագրվում են իբրև «ոսկեփետուրք և ոսկետտունք»՝ ակնարկելով հրեշտակաց դասի մաքուր ու անաղարտ բնությունը[46]: Հատկանշելի են խորաններից երկուսը, որոնց կենտրոնական սյունը պսակված է թագակիր մարդադեմ խոյակով, որոնք, հիմնականում պատկերում էին Դավիթ կամ Սողոմոն մարգարեներից որևէ մեկին: Խոյակի նման պատկերումը բնորոշ է ԺԳ-ԺԴ. դդ. կիլիկյան մանրանկարչությանը:

---

[44] ***Վ. Հ. Ղազարյան,*** Մեկնութիւն Խորանաց, Ս. Էջմիածին, 2004, էջ 31:

[45] «Սմբատ Գունդստաբլի» Ավետարանը՝ ՄՄ ձեռ. Հ^{մր} 7644, ստեղծվել է կիլիկյան մանրանկարչության զարգացման շրջանում՝ ԺԳ. դարի 60-70-ական թթ.: Ավետարանի գլխավոր հիշատակարանը չի պահպանվել, կան միայն կարճ հիշատակագրություններ՝ գրված պատվիրատու՝ զորավար, դիվանագետ ու պատմաբան Սմբատ Գունդստաբլի ձեռքով, որը եղել է նաև Կիլիկյան Հայաստանի Հեթում Ա. թագավորի եղբայրը: Բարձրաստիճան պատվիրատուի պահանջներին համապատասխան՝ ստեղծվել է այս շքեղ ձեռագիրը, ընտիր մշակված մագաղաթի վրա, մանր գեղեցիկ բոլորգրով և զարդարված մանրանկարներով՝ խորաններով, անվանաթերթերով, ավետարանիչների պատկերներով, լուսանցազարդերով, որոնք արված են բարձրորակ ներկերով, ոսկու առատ օգտագործմամբ:

[46] ***Վ. Հ. Ղազարյան,*** Խորանների մեկնություններ, Երևան, 1995, էջ 15:

Թագակիր մարդադեմ խոյակներ, էջ 5բ, 6ա

«Ձորավոր» Ավետարանի՝ Եվսեբիոսի նամակի ու համաբարբառի ութ հանդիպակաց խորաններն ունեն կառուցվածքային որոշ ընդհանրություններ. դրանք կազմված են երկու հիմնական տարրերից՝ գորգանման ուղղանկյուն գլխազարդից և սյուների մեջ ամփոփված բնագրային աղյուսակային խորաններ մակերեսից: Կառուցվածքը գլխավորապես հիմնված է պատվանդան ծառայող հորիզոնական նախշազարդ երկարավուն երիզի վրա, իսկ սյուներն ու գլխազարդը միմյանցից բաժանվում են պատվանդանի երկարությանը գրեթե հավասար հորիզոնական քիվով[47]: Բոլոր խորանները եռասյուն են, սյուները՝ խարիսխ խոյակներով, ինչպես «Հաղբատի» Ավետարանի (ՄՄ ձեռ. Հ^{մր} 6288) խորանների դեպքում[48]: Խոյակները հիմնականում կազմված են բուսական ոճավոր զարդանախշերից: Խորանների գլխազարդի ոսկե հենքը զարդարված է կապույտ, կարմիր, սև գծերի հյուսվածքով կազմված երկրաչափական և բուսական համակցություններից: Դրանց մեծ մասի վերնամասը հարդարված է քրիստոնեական հավատքը խորհրդանշող սկիհի շուրջը համաչափ դասավորված երկու թռչուններով, որոնք մե՛րթ դիմահայաց են, մե՛րթ՝ հակառակ դիրքով: Բացառություն է խորաններից մեկի գլխազարդը (էջ 9բ), որտեղ թռչուններին փոխարինում են առասպելական զույգ կերպարներ: Մեկ այլ գլխազարդի վերնամասի կենտրոնում պատկերված են իրար հետ կռվի պատրաստված աքաղաղներ[49] (էջ 7բ), որն ինքնատիպ է այն առումով, որ ներսում՝ կամարի մեջ, նշմարվում են նաև մարդկային երկու դեմք: Նման երևույթը բնորոշ է Մատենադարանի Հ^{մր} 9422 ձեռագրի անվանաթերթերի պատկերազարդմանը:

Գլխազարդերից մեկի երկու կողային լուսանցներում՝ ճակատազարդի հորիզոնական քիվի (արխիտրավի) վրա, պատկերված է վառվող մոմով մոմակալ՝ դեմ դիմաց կանգնած զույգ թռչուններով (էջ 3բ): Ինչ վերաբերում է արտաքին լուսանցների պատվանդաններին, ապա դրանք հարդարված են ոչ փարթամ կենաց ծառերով, որոնք իրենց վրա են կրում տարբեր դիրքերով պատկերված մեկական թռչուններ:

[47] ***Վ. Հ. Ղազարյան,*** Սարգիս Պիծակ, Երևան 1980, էջ 27:

[48] Հաղբատի Ավետարանը Անիի մանրանկարչության եզակի նմուշ, հեղինակ-կազմող՝ ***Կ. Մաքևոսյան,*** մասնակից հեղինակ՝ ***Գ. Էլիազյան,*** Երևան, 2012, էջ 14:

[49] ***Հ. Հակոբյան,*** Արցախ-Ուտիքի մանրանկարչությունը 13-14-րդ դդ., Երևան, 1989, էջ 39-40:

Խորանի գլխազարդ, էջ 7բ

Խորաններն ունեն հագեցած գունային երանգներ. ներկապնակն օժտված է հիմնականում չորս գույնով՝ կարմիր, կանաչ, սև և կապույտ. աչքի է ընկնում նաև ոսկու առատ օգտագործմամբ: Խորանների չորս գույները խորհրդանշում են բնության նույնքան տարրերը:

Անվանաթերթ. Խորաններից զատ՝ ճոխ ու հագեցած մանրանկարչությամբ աչքի են ընկնում նաև Ավետարանի անվանաթերթերը, որոնց հորինվածքում ներդաշնակ կերպով համադրված են երկաթագրի գեղեցկությունը, ավետարանչի խորհրդանշանների հետ հանդես եկող խոշոր սկզբնատառը և ինքնատիպ ճակատազարդը:

Անցնելով անվանաթերթերի ուսումնասիրությանը՝ անհրաժեշտ է նախ դիտարկել ճակատազարդի պատկերագրությունը: Մատթեոսի Ավետարանի անվանաթերթում ուղղանկյուն պատկերի ստորին հորիզոնական գիծը հատվում է կամարաղեղով: Յուրաքանչյուր անվանաթերթի ճակատազարդի կամարի տակ գրված է համապատասխան Ավետարանի խորագիրը, օրինակ՝ «Աւետարան Ըստ Մատթէոսի»: Ճակատազարդի ուղղանկյան ներսում՝ ոսկեգույն հենքի վրա, պատկերված են բուսական զարդանախշեր և երկու հուշկապարիկ, որոնց կենտրոնում՝ մեդալիոնի մեջ, ներկայացված է «Քրիստոս Ամենակալ» պատկերագրական տիպը, որտեղ Քրիստոսը աջ ձեռքով օրհնում է, իսկ ձախում պահում է Ավետարանը: Ճակատազարդի վերին անկյունագլուխների վրա պատկերված են բուսազարդերից կազմված եղջյուրներ, իսկ կենտրոնում՝ խաչի շուրջը համաչափ դասավորված երկու թռչուն: Ճակատազարդից ներքև պատկերված է «Գ» սկզբնատառը՝ Մատթեոսին խորհրդանշող հրեշտակի տեսքով: Ի դեպ, հրեշտակի լուսապսակը ոսկեզօծ է (էջ 12ա):

Մարկոսի Ավետարանի անվանաթերթի ուղղանկյունաձև ճակատազարդը հարդարված է բուսական զարդանախշերով, որոնց կենտրոնում՝ մեդալիոնի մեջ, տեղադրված է հավասարաթև խաչ (էջ 77ա): Ինչպես խորաններում, այնպես էլ այստեղ, վերնամասում պատկերված են քրիստոնեական հավատքը խորհրդանշող սկիհի շուրջը համաչափ դասավորված երկու թռչուն:

Անվանաթերթի ճակատազարդի տակ զետեղված «Ս» սկզբնատառի երկու ստեղների արանքում Մարկոս ավետարանչի խորհրդանշան առյուծն է՝ Ավետա-

Կիսախորան, էջ 12ա

րանը բռնած թաթերի մեջ: Ըստ Ս. Տեր-Ներսիսյանի՝ զարդագրի ու խորհրդանշանի նմանօրինակ հաղորդումը «խիստ բնորոշ է Մեծ Հայքի ձեռագրերում Մարկոսի անվանաթերթերի համար»[50]:

Եթե նախորդ ճակատազարդը հարդարված էր բուսական զարդանախշերով, ապա Ղուկասի բնագրի անվանաթերթի դեպքում հարդարանքը երկրաչափական է (էջ 121ա): Անվանաթերթի «Ք» սկզբնատառը ներկայացված է Ղուկասին խորհրդանշող թևավոր եզան տեսքով, որը թաթերով բռնել է Ավետարանը: Ճակատազարդը եզրագծված է հավերժությունը խորհրդանշող գալարով: Ղուկասի խորհրդանիշ եզան թևերը բնորոշ են քրիստոնեական արվեստում ավետարանիչների խորհրդանշանների պատկերագրության ձևավորման համեմատաբար ուշ շրջանի համար:

Հովհաննես ավետարանչի անվանաթերթի ճակատազարդը համալրված է կենդանական, թերևս, եղնիկների պատկերներով (էջ 192ա): Ճակատազարդի վերին հատվածի կենտրոնում նույնպես պատկերված են հավատի աղբյուրից սնվող երկու թռչուններ: «Ի» սկզբնատառը Հովհաննեսին խորհրդանշող արծվի տեսքով է, որը կտուցով պահում է Ավետարանը:

Ավետարանիչներ. «Զորավոր» Ավետարանում պահպանվել է միայն Մատթեոս ավետարանչի մանրանկարը: Մնացած երեք ավետարանիչների պատկերները, ինչպես արդեն նշեցինք՝ կտրված-հանված են: Մատթեոսի պատկերը անվանաթերթի հետ միասին զետեղված է նրա Ավետարանի սկզբում (էջ 11բ): Մինչ Մատթեոս ավետարանչի մանրանկարի պատկերագրությանը անցնելը՝ համառոտ անդրադառնանք ավետարանիչների խորհրդաբանությանը:

Ավետարանիչները Նոր Կտակարանի չորս Ավետարանների հեղինակներն են, որոնք եղել են Հիսուս Քրիստոսի աշակերտներից և իրենց ավետարաններում ներկայացրել են Տիրոջ երկրային կյանքը:

Ավետարանիչներն են Մատթեոսը՝ առաջին Ավետարանի հեղինակը, և հաջորդաբար՝ Մարկոսը, Ղուկասը, Հովհաննեսը: Մատթեոսը և Հովհաննեսը եղել են Հիսուս Քրիստոսի 12, իսկ Մարկոսն ու Ղուկասը՝ 70 աշակերտներից, որոնց Հիսուսը

[50] ***Լ. Բ. Չուգասզյան,*** Գրիգոր Ծաղկող, Երևան, 1986, էջ 30 (այսուհետև՝ Գրիգոր Ծաղկող):

ընտրել էր խաչելությունից մեկ տարի առաջ և տվել այն հորդորները, ինչ տվել էր 12 առաքյալներին: Արևմտյան արվեստում չորս ավետարանիչները նույնացվել են եկեղեցական տեսության մեկնողների՝ Ամբրոսիոսի, Հերոնիմոսի, Ավգուստինոսի և Գրիգոր Մեծի հետ: Հաճախ նույնացվել են նաև մարգարեների՝ Եսայու, Երեմիայի, Դանիելի և Եզեկիելի հետ, որոնց երևացել է Քառակերպը, որի ամեն մի կերպը խորհրդանշում էր մի ավետարանչի: Այսպես, Մատթեոսը պատկերվել է մարդու կամ հրեշտակի տեսքով, Մարկոսը՝ առյուծի, Ղուկասը՝ եզան, և, վերջապես, Հովհաննեսը՝ արծվի: Խորհրդանիշների այս համակարգի ստեղծողներն են՝ Հերոնիմոսը (342-410 թթ.) և Եպիփան Կիպրացին (315-403 թթ.): Այս կենդանիները կոչվում են հայտնութենական (ապոկալիպտիկ) կենդանիներ և մշտապես պատկերվել են փառապսակով, ինչը վկայում է նրանց աստվածային բնույթը: Ավետարանիչներին հայտնութենական կենդանիների տեսքով պատկերելը ունի իր բացատրությունը: Մարդը երկրի տիրակալն է և համապատասխանում է Քրիստոսի մարդասիրությանը: Առյուծը վայրի կենդանիների տիրակալն է և խորհրդանշում է հպարտությունը, արքայական արժանապատվությունը և համապատասխանում է Քրիստոսի հարությանը: Ցուլը կամ եզը ընտանի կենդանիների տիրակալն է և խորհրդանշում է ուժը, զոհողությունն ու չարչարանքները, որը Քրիստոսը կրեց խաչի վրա: Արծիվը թռչունների տիրակալն է և խորհրդանշում է արժանապատվությունը, բարերարությունը և աստվածայինը, ինչը կապվում է Համբարձման հետ: Բացի այդ, Մատթեոսի՝ մարդու տեսքով պատկերվելը բացատրվում է նրանով, որ նա իր Ավետարանում հիմնականում ընդգծում է Քրիստոսի մարդկային բնույթը և վկայում Քրիստոսի հրեական ծագման իսկության մասին: Մարկոսի՝ առյուծի ձևով պատկերվելը բացատրվում է նրանով, որ նա մատնանշում է Քրիստոսի աստվածային իշխանությունը՝ ընդգծելով նրա գործերի վեհությունը: Ղուկասը պատկերվում է եզան տեսքով, քանի որ նրա Ավետարանը սկսում է զոհաբերության տեսարանով, որը հոգևորականները կատարում են տաճարում. այս դեպքում շեշտվում է նաև Քրիստոսի կյանքի՝ ինքնազոհաբերության հետ ունեցած կապը: Հովհաննեսը ներկայացվում է արծվի տեսքով, ինչը խորհրդանշում է առաքյալի ունեցած հզոր և բարձր թռչող միտքը, որով նա շարադրել է իր Ավետարանը (կան և այլ բացատրություններ):

«Զորավոր» Ավետարանում Մատթեոս ավետարանիչը պատկերված է իմաստունի դիրքով՝ իր գրելիքի մասին խորհրդածելիս, բարձր աթոռին նստած: Նրա տակ դրված է կարմիր մի բարձ: Ինքնամփոփ հայացքը արտացոլում է Քրիստոսի կյանքը նկարագրող ոգեշնչված աշակերտի ստեղծագործական հոգեվիճակը: Ծաղկողը, որի անունը ցավոք մեզ չի հասել, ավետարանչին պատկերել է կապույտ պարեգոտով (կապա, տունիկա), նարնջագույն վերնազգեստ (տոգա) և սանդալներ հագած: Նրա առջև պատկերված է փոքր, քառոտանի սեղան՝ վրան գրենական պիտույքներ (գրիչ, թանաքաման, մկրատ և այլն): Սեղանին ամրացված է նաև բարձր, ձկնակերպ հենարանով գրակալ, ձկան բերանը հպված է սեղանի եզրին, իսկ պոչին դրված է գիրք: Ձուկը քրիստոնեական խորհրդաբանության մեջ ունի երկակի իմաստ՝ կատակոմբներում իբրև Հիսուսի, ավետարաններում՝ մարդու հոգու, որպեսզի առաքյալները որսային այն, ինչպես Պետրոսը և Զեբեդեոսի որդի-

[51] ***Н. В. Покровский,*** Евангелие в памятниках иконографии, Москва, 2001, с. 37 (այսուհետև՝ Евангелие в памятниках иконографии):

ները ուռկանով ձուկ էին որսում[51]: Գրակալի պատվանդանի կամարաձև խորշում պատկերված է սափոր: Ավետարանչի աթոռը զարդարված է տարաձև նախշերով: Հայտնի է, որ նստած ավետարանիչների պատկերները միջնադարյան արվեստում ստեղծվել են բանաստեղծներ Էվրիպիդեսին, Սոֆոկլեսին և փիլիսոփաներ Պլատոնին, Արիստոտելին, Զենոնին պատկերող հելլենիստական շրջանի արձանների հիման վրա[52]: Մանրանկարն աչքի է ընկնում կատարման գունային գեղանկարչական եղանակով, հորինվածքի կուռ ամբողջականությամբ: Ավետարանչի մեծածավալ, կոթողային կերպարը այստեղ ներկայացված է ճարտարապետական կառույցի հենքի վրա: Վերջինիս թիկունքում վեր են խոյանում գմբեթով, պատշգամբով ու կարմիր կղմինդրե տանիքով կառույցներ, որոնք պսակված են խաչով. դրանք պատկերված են ճակատային դիրքերով: Վերին աջ մասում երկնային քառորդ շրջանից իջնում է Աստծո աջը (մեկնված են ցուցամատն ու միջնամատը, ծալված՝ ճկույթն ու մատնեմատը՝ բութի հետ): Աստծո աջը ոգեշնչման աղբյուր է ավետարանչի համար, որի պատկերը զետեղված է շրջանակի մեջ՝ նախշազարդված բուսական տարրերով: Վերնամասի անկյունագլուխները հարդարված են բուսազարդերից կազմված եղջյուրներով: Մատթեոս ավետարանչի մանրանկարը որոշ ընդհանրություններ ունի «Սմբատ Սպարապետի» և «Ութ մանրանկարիչներ»[53] ավետարաններում զետեղված նույնանուն ավետարանչի պատկերների հետ:

Զաքեոս, էջ 175բ

Լուսանցային մանրանկարներ և լուսանցազարդեր. Ավետարանի լուսանցներում ծաղկողը պատկերել է ավետարանական պատմության մի քանի դրվագներ և թողել զարդանախշեր, որոնք նշում են նոր գլուխների սկիզբը: Լուսանցային մանրանկարներում մարդկային կերպարներն ավարտվում են բուսական վերջավորություններով: Ծաղկողը լուսանցում միայն մեկ թեմա է արծարծում, ընդ որում՝ թեմային վերաբերող բնագիրը մեծ մասամբ հենց պատկերի կողքին է, որով բնագիրն ու պատկերը լրացնում են միմյանց[54]: Լուսանցային մանրանկարների մեծ մասը գծային պատկերներ են՝ արված կարմիր թանաքով: Բացառություն են միայն Հովհաննես Մկրտչին պատկերող մանրանկարը և մի քանի բուսական լուսանցազարդեր ու զարդագրեր (էջ 15բ, 17ա և այլն):

«Մուտք Երուսաղեմ» տերունական մանրանկարից լուսանցում ներկայացված է միայն կարճահասակ Զաքեոսին պատկերող հատվածը (էջ 175բ): Այն ժամանակ, երբ Քրիստոսը էշին նստած մտնում է Երուսաղեմ, բնակիչները արմավենու ճյուղեր են սփռում Տիրոջ ճանապարհին: Ըստ Մատթեոսի և Մարկոսի՝ արմավենու ոստեր կտրատելու համար բնակիչներից ոմանք ծառ են բարձրանում: Համաձայն Ղուկասի՝ ծառ է բարձ-

[52] Գրիգոր Ծաղկող, էջ 33

[53] ՄՄ Հ^{մր} 7651 «Ավետարան» ձեռագիրը պատկերազարդել են ԺԳ. դարի վերջին քառորդի անհայտ նկարիչներ, իսկ 1320-ին՝ Սարգիս Պիծակը:

[54] ***Վ. Հ. Ղազարյան,*** Սարգիս Պիծակ, էջ 75-76:

բանում նաև Զաքեոս կարճահասակը՝ Քրիստոսին տեսնելու նպատակով: Նրան, սովորաբար, պատկերում են նման տեսարանում, որպեսզի ցույց տան, թե որքան շատ մարդ էր հավաքվել, որ կարճահասակ Զաքեոսը բարձրանում է ծառը՝ Քրիստոսին տեսնելու համար[55]: Լուսանցային մանրանկարում Զաքեոսը ներկայացված է հենց վերը նշված պատկերագրական տիպով՝ արմավենու ոստը ձեռքին:

Ձեռագրի 122բ և 123ա հանդիպակաց էջերի լուսանցներում զետեղված է Ավետումը: Ձախ՝ 122բ էջի լուսանցում պատկերված է Գաբրիել հրեշտակապետը, իսկ հանդիպակաց 123ա էջին՝ Տիրամայրը: Հրեշտակապետի աջը պարզած է առաջ՝ որպես խոսքի և օրհնության նշան: Մարիամն ունկնդրում է հրեշտակապետին՝ ձեռքերը վեր պարզած, հայացքը խոնարհված է, կարծես հնազանդության նշան է ցույց տալիս: Աստվածամոր դիրքը և շարժումը փաստում է, որ նա խոնարհությամբ է ընկալում Գաբրիելի խոսքերը:

Ավետարանի 16բ և 17ա էջերի լուսանցները ներկայացնում են Հովհաննես Մկրտչին, որը պատկերված է մորուքով, երկար մազերով, լուսապսակով, պարեգոտով, ձեռքին՝ գալարակ: Այս մանրանկարը տարբերվում է մյուսներից նրանով, որ նկարազարդված է կանաչ և կապույտ գույներով: Մյուս լուսանցային պատկերը ներկայացնում է գլխատված Հովհաննես Մկրտչին: Լուսանցազարդի վերին հատվածը կատարում է սկուտեղի դեր, որի վրա դրված է Հովհաննեսի գլուխը[56]: Վերջին լուսանցային մանրանկարը, որը նույնպես զետեղված է հանդիպադիր էջերում, պատկերում է Պողոս և Պետրոս առաքյալներին (էջ 240ա-241բ):

Ինչ վերաբերում է լուսանցազարդերին, ապա դրանք հիմնականում կազմված են երկրաչափական և բուսական ոճավորված զարդանախշերից (էջ 16ա, 22ա, 91ա և այլն), երբեմն էլ արտահայտված են թռչունների (էջ 33ա, 111բ և այլն), տաճարի (էջ 61բ, 126բ և այլն), ծառի (էջ 53բ, 54բ և այլն) կամ խաչի (էջ 73ա, 197ա) տեսքով: Առանձնանշելի են հատկապես ավետարանիչների անվանաթերթերի լուսանցազարդերը, որոնք պսակված են խաչով և ունեն շքեղ նկարազարդում (էջ 77ա, 121ա):

Զարդագրեր. Ավետարանի գրաղաշտն աչքի է ընկնում նաև բազմաթիվ զարդագրերով, որոնք հիմնականում հանգուցագրեր ու թռչնագրեր են, երբեմն էլ առանձին սկզբնատառեր մարդադեմ են: Զարդագրերի գրեթե կեսից ավելին «Ե» գլխագրի՝ հիմնականում թռչնակերպ տեսակներն են (էջ 13բ, 14ա և այլն): Նախքան դրանց քննությանն անցնելը՝ անհրաժեշտ է նկատել, որ գրերը ձևավորելու առաջին փորձերը հայկական ձեռագրերում ի հայտ են գալիս դեռևս Ժ. դարից[57]: ԺԱ. դ. վերջերից զարդագրեր հանդիպում են ոչ միայն հայկական մատյանների անվանաթերթերում, այլև ավետարանական բնագրի գլուխների սկզբում: Ս. Տեր-Ներսիսյանը զարդագրերի արվեստում հստակորեն սահմանազատում է երկու ուղղություն, որոնցից մեկը

[55] Евангелие в памятниках иконографии, с. 347-351.

[56] Գալիլիայի կառավարիչ Հերովդես Ագրիպիասի ծննդյան տոնի առթիվ Հերովդիադայի դուստր Սալոմեն (որի անունը չի հիշատակվում Ավետարանում) պարել է: Հերովդեսն այնքան է հավանել նրա պարը, որ բազմաթիվ հյուրերի ներկայությամբ խոստացել է Սալոմեին տալ այն, ինչ կցանկանա նա: Մոր թելադրանքով Սալոմեն խնդրել է Հովհաննես Մկրտչի գլուխը: Խնդրանքը կատարվել է, և Հովհաննես Մկրտչի գլուխը սկուտեղով մատուցվել է Սալոմեին, որն էլ այն տվել է մորը (Մտթ. ԺԴ. 6-12, Մրկ. Զ. 21-29):

[57] Զարդագրության մասին մանրամասն տե՛ս Հայկական մանրանկարչություն. զարդատառեր, Երևան, 1992:

բնորոշ է կիլիկյան, իսկ մյուսը՝ Բարձր Հայքի մանրանկարչությանը: Բարձր Հայքի մանրանկարիչները գերադասում են տառերը ձևավորել երկրաչափական ու բուսական տարրերով, օրինակ՝ եռանկյունների շարքերով, օղակներով և դրանց արանքը զետեղված հյուսվածքներով ու փոքրիկ արմավենիկներով: ԺԲ. դարի վերջից կիլիկյան գրքարվեստում գրերը սկսում են զարդարել թռչուններով, իսկ ԺԳ. դարից՝ մարդկային կերպարանքներով:

Մանրանկարչության ընդհանուր բնութագիր. «Ձորավոր» Ավետարանի ծաղկողը նախապատվությունը տալիս է և՛ Բարձր Հայքի, և՛ կիլիկյան մանրանկարչության ավանդույթներին: Ավետարանի զարդագրերի ստեղները, կամ, այլ կերպ ասած՝ «կայմերը», գլխավորապես զարդարվում են եռանկյունների, քառանկյունների շարքերով, որոնց արանքում տեղադրվում են եռատերևներ, քառատերևներ, բողբոջներ (էջ 53բ, 56ա և այլն): Բարդ հանգույցներից բաղկացած որոշ զարդագրեր աչքի են ընկնում արտակարգ գեղակազմ ձևերով:

Անվիճելի է, որ խորաններն ու գլխազարդերը, ավետարանիչների խորհրդանիշները պատկերող սկզբնատառերի, զարդագրերի, լուսանցազարդերի, լուսանցային մանրանկարների հետ միասին էջի վրա դասավորված են արտակարգ հմտությամբ: Ներդաշնակված կանաչ, կարմիր, կապույտ գույները ոսկե հենքի վրա ստեղծում են ակնահաճո գունային ներկապնակ և հատուկ փայլ հաղորդում ձեռագրին:

«Ձորավոր» Ավետարանի մանրանկարչական արվեստը քննող մեր համառոտ տեսությունը վկայում է, որ ձեռագրի նկարազարդումներն արվել են ոչ թե մեկ, այլ, թերևս, երկու տարբեր ծաղկողների կողմից: Առաջինը հեղինակն է խորանների, ավետարանիչների պատկերների, անվանաթերթերի, որոշ լուսանցազարդերի, իսկ երկրորդը՝ լուսանցազարդերի մեծ մասի, լուսանցային մանրանկարների և զարդագրերի, որոնք տարբերվում են իրենց կատարողական վարպետությամբ, պատկերման ու գունավորման ոճով:

Ինչպես վերը նշեցինք, Ա. Մաթևոսյանը, նկատի առնելով «Ձորավոր» Ավետարանի՝ «Սմբատ Գունդստաբլի» Ավետարանի հետ ունեցած գրչական ու մանրանկարչական բազում ընդհանրությունները, եկել էր այն եզրահանգման, որ ձեռագիրը կրում է կիլիկյան մանրանկարչական դպրոցի դրոշմը[58]: Կարծում ենք՝ այդ նմանությունները առաջին հերթին երևան են գալիս խորանների՝ մի դեպքում խարիսխների, մյուս դեպքում՝ խոյակների կենդանակերպ լուծումներով, անվանաթերթերի ճակատազարդերի ներսում կենդանիների նույնատիպ պատկերներով, ավետարանչի հագուստի ծալքերի գրեթե նույնակերպ արտահայտմամբ, ճարտարապետական հենքով, ինչպես և զարդապատկերների կատարման համանման եղանակով, որոնք թույլ են տալիս հավանական համարել, որ մանրանկարները կարող են պատկանել միևնույն մանրանկարչական դպրոցին:

Արփինե Սիմոնյան
Մատենադարանի ձեռագրագիտության
և Մայր ցուցակի բաժնի գիտաշխատող

[58] ***Ա. Մաթևոսյան,*** Երևանի գրչության կենտրոնները, էջ 114-115:

Զ. Ձեռագրի նկարագրությունը: Նպատակահարմար ենք գտնում կից ներկայացնել նաև ձեռագրի գիտական ընդարձակ նկարագրությունը: Հիշատակարանները, բնագրային տեսքից բացի, բերել ենք նաև աշխարհաբար տարբերակներով:

4060
ԱՎԵՏԱՐԱՆ

ԺԳ. դար

ՍՏԱՑՈՂ՝ Յակոբ Երեւանցի: ԿԱԶՄՈՂ՝ Զաքարայ էրէց:

ԹԵՐԹ՝ 245. չգրված՝ 1ա, 2բ-3ա, 4բ-5ա, 6բ-7ա, 8բ-9ա, 10բ-1ա, 245աբ: ՊՐԱԿ՝ 10+[Ա-Ի]x12+6 (Ա, Է, ԺԱ՝ 11, Զ՝ 7, Թ՝ 13, Ժ՝ 8) (խառն պրակակալմամբ): ՆՅՈՒԹ՝ մագաղաթ, թ. 243-4՝ թուղթ: ՄԵԾՈՒԹՅՈՒՆ՝ 23,7x16,2: ԳՐՈՒԹՅՈՒՆ՝ երկսյուն (17x12), ԳԻՐ՝ բոլորգիր (նմուշ՝ 17ա): Տող՝ 23: ԿԱԶՄ՝ մուգ շագանակագույն դրոշմազարդ կաշի, դռնակով, Ա. փեղկը՝ պատված 59 մեծ եւ 32 փոքր կոստղերով ու 6 փլաքներով (կոստղերից 14-ն ընկած), մեջտեղում մետաղյա խաչ՝ մակագրությամբ. «Յիշատակ է Սուրբ խաչս Առաքելին եւ կողակցին՝ Ուղուրսօլթանին եւ դստերացն՝ Սէվարխանին, Օղլանփաշին, Մարիամին», միջուկը՝ տախտակ, աստառը՝ կարմիր մետաքս:



էջ 17ա

ՄԱՆՐԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ՝ Մատթեոս. մակագրությամբ «Սուրբ Մատթէոս աւետարանիչ»՝ 11բ (մնացած երեք ավետարանիչների մանրանկարները՝ կտրածհանած): Լուսանցային մանրանկար՝ Հովհաննես Մկրտիչ՝ 15բ, 39բ, Գաբրիել հրեշտակապետ՝ 48ա, Ավետում՝ 122բ-123ա (հանդիպակաց էջերում՝ Գաբրիել հրեշտակապետ և Տիրամայր), Զաքեոս՝ 175բ, Հիսուս Քրիստոս՝ 199բ, Պողոս և Պետրոս առաքյալներ՝ 240բ-241ա: Խորան՝ 1ա-2ա (2ա՝ գլխազարդում՝ Կարպիանոսի դիմանկարը), 3բ-4ա, 5բ-6ա, 7բ-8ա, 9բ-10ա (4ա, 6ա, 10ա՝ գլխազարդը՝ մկրատված): Կիսախորան՝ 12ա (կենտրոնում՝ Հիսուս Քրիստոսը), 77ա, 121ա, 192ա: Լուսանցազարդ՝ բուսական, թռչնային, ծառ, տաճար՝ 109ա, 126բ, 179բ, 216բ, խաչ՝ 73ա, 147ա: Զարդագիր՝ հրեշտակագիր՝ 12ա, թռչնագիր, հանգուցագիր, մարդադեմ «Զ»՝ 48ա, 193ա: Գույներ՝ ոսկի, կարմիր, կապույտ, կանաչ, դեղին, մանուշակագույն, մոխրագույն, շագանակագույն, ծիրանի, սպիտակ, սև:

ՎԻՃԱԿ՝ բավարար, խոնավության հետքերով, գործածությունից մի շարք թերթեր գունափոխված, կազմի կաշվի եզրերը մաշված, երեք կապիչները, ինչպես նաև խաչի կենտրոնի ու վերին թևի ակերն ընկած, մեջքին առկա են նախորդ պիտակից մնացած հետքեր, աստառը՝ ցեցակեր, թ. 1, 4, 6, 10՝ վերևից կիսով չափ մկրատված՝ մանրանկարները վնասված, տերունական չորս մանրանկարներից երեքը հիմքից կտրած-հանած, հետագա նորոգման ժամանակ օգտագործված են նաև այլ ձեռագիր պատառիկներ, թ. 24՝ մագաղաթի ճեղքը կարված քուղով, իսկ թ.՝ 55, 140, 169, 223, 230՝ մնացել են միայն կարի անցքերը, թ. 38, 85, 159, 237՝ լուսանցին առկա են էջանշան թելեր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. 1բ-2ա Թուղթ Եւսեբեայ
2. 3բ-4ա, 5բ-6ա, 7բ-8ա, 9բ-10ա Համաբարբառ (նաև՝ լուսանցային)
3. 12ա-76բ Աւետարան ըստ Մատթէոսի
4. 77ա-120բ Աւետարան ըստ Մարկոսի (120աբ՝ «Յարուցեալ Յիսուս»)
5. 121ա-91բ Աւետարան ըստ Ղուկասու
6. 192ա-241բ Աւետարան Յովհաննու
- 242աբ ՀԱՎԵԼԱԳՐՈՒԹՅՈՒՆ (ԺԸ. դար, շղագրանման նոտրգիր) Այս է խրատք պաշտմանց Աւետարանից – Մատթէոս ՃԽ. ...

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

1. 243-4բ (ԺԵ. դար, բոլորգիր, ստացողի) Յուսով անմահին Աստուծոյ Հաւր եւ ի փառս ծնիցելոյն /// անեղապէս Որդ[ոյ]ն միածնի եւ ի գովեսդ բխե[ցել]ոյն ի նոյն յէութենէ Հոգւոյն ճշմարտի, համազաւր համապատու, համագոյ եւ միասնական Սուրբ Երրորդութեանն Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ:

Արդ, ես՝ անա[ր]ժանս եւ անպիտանս ի յոքունց եւ ի նմանեաց իմոց ***Յակովբ*** կոչեցեալ՝ որդի ***Վիշապին,*** գեղաքաղաքէս ***Էրեւանոյ,*** ի յաւանդութենէ ծնողաց իմոց վեր[ա]սացեալ ընկալմամբ զքրիստոսական դաւանութիւնն, հաւատակցութեամբ դաւանութեանն Երրորդական աստուածութեանն, եւ զմտաւ ածեալ իմ յիշեցի զառաքելական հրամանս, որ ասէ. Երանի, որ [ո]ւ[ն]ցի զաւակ ի Սի[ո]ն եւ ընդանի յԵրուսաղէմ: Եւ սակս այս պատճառի աւր ըստ աւրէ ըղձայի մնալ, հասանիլ բաղձանաց սրտիս: Որոյ ողորմածն եւ բարէգութն Աստուած, /// [ար]արիչն է խնդրու[ածոցն], լսաւղն է աղաւթից, ընդունելի արար զաղաչանս մեր եւ բերեալ հանդիպեցոյց պատահմամբ ի դրունս մեր զաստուածախաւս ըզքրիստոսայպրաք սուրբ Աւետարանս, ի ձեռն վաճառողաց անգին մարգարտիս, որոյ ականատես եղեալ իմ աչօք՝ յարեա, կանգնեցա, կացի եւ կառուցա, ցնծացա եւ զուարճացա, բերկրեցա եւ բոլորեցա, եւ յոյժ գոհացա զամենառատ պարգեւողէն, ո[ր] արժանի արար կատարել զխնդրուածս իմ եւ հաճոյացոյց զբաղձանս իմ: Վասն որոյ եւ /// կամաւք Արարչին |243բ| [ս]տացայ զհոգէփրկանք սուրբ Աւետարանս ի հալալ արդեանց իմոց՝ յիշատակ ինձ եւ ծնողաց ի[մ]ոց եւ ամենայն արեան մերձաւորաց, առ ի Քրիստոս ննջեցեալ հաւրն իմոյ՝ ***Ուշապին*** եւ մաւր իմոյ՝ ***Ջանանին*** եւ

կենակցին իմոյ՝ ***Մամախաթունին,*** եւ ի Քրիստոս փոխեցեալ եղբարց իմոց՝ ***Գրիգորին*** եւ ***Անտիպէկին,*** եւ որդւոյ իմոյ՝ ***Ղըտրշի:*** Եւ վասն արեւշատութեան մնացեալ որդոց իմոց՝ ***Աղուպշին*** եւ ***Զահանշին,*** եւ որդոյ իւրոյ՝ ***Դովլաթխաւջին*** եւ զաւակաց նորին՝ ***[Մ]մբատին*** եւ ***Զաքարին:*** Նաեւ ծերացեալ զոքանչին իմո ***Էսուգանին,*** որ աւգնական եղեւ ի գին սուրբ Աւետարանիս: Եւ արդ, ես՝ ***Յակոբս,*** զաստուածախաւս սուրբ Աւետարանս եւ մէկ ձեռն սգեստ եւ սկիհ արծաթի, որ ստացա ի հալալ արդեանց իմոց, ընձայեցի ***Էրեւանո*** հրաշալի եւ յորդոր ժամատեղեացս, որ յամենայն ամի Յայտնութեանն եւ Զատկին եւ Հոգւոյ գալըստեանն պատարագաւ եւ Քրիստոս Որդի ասելով յիշատակեն զմեզ եւ զվերասացեալ ծնողքն մեր եւ զայլ արեան մերձաւորս, որք կան շարագրեալ յիշատակարանիս:

Եւ արդ, աղաչեմ զձեզ, ո՞վ սուրբ պատարագողք եւ ընթերցողք քրիստոսապրակ սուրբ Աւետարանիս, յիշեսջիք լիաբերան բոլորով սրտիւ ի մաքրափայլ յաղաւթս ձեր զիս՝ զմեղաւոր եւ զանարժան ոգի ***Յակոբս*** եւ զհայրն իմ՝ ***զՎիշապն*** եւ զմայրն իմ՝ ***զՋրհանն*** եւ զկողակիցն իմ՝ ***զՄամախաթունն,*** եւ զոքանչն |244ա| ***[Է]սուկանն*** եւ /// ազատ եղբարքն իմ՝ ***զԳրիգորն*** եւ ***զԱնտիպէկն*** եւ զորդիքն [ի]մ՝ ***զՂտրշահն,*** փոխեցեալն առ Քրիստոս եւ զնորաբողբոջ դեռաբոյս որդիքս իմ՝ ***զԱղուպշէն,*** եւ ***զԴովլաթխաւջէն,*** եւ ***Մմբատն,*** եւ ***Զաքարէն, զՋահանշէն*** եւ զայլ ամենայն ազգայինս իմ. զառաջինս, զմիջինս եւ զվերջինս: Որով յիշողքս յիշեալ լիջիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ՝ աւրհնելոյ յաւիտեանս. ամէն:

Յաստուածարար սքանչելեաց Տեառն բազում ինչ է, զոր տեսանեմք աչաւք եւ իմանալ անկարանամք մտաւք, եւ բազում ինչ է, զոր իմանամք մտաւք եւ չափն պատմել անգիտանամք բանիւ: Զի ահա, տեսանեմք զարեգակն, զի գեղեցիկ է եւ հրաշալի, եւ զորպիսութիւն գեղոյն իմանալ կարանա[մք] մտաւք: Եւ դարձեալ՝ զծով իմանամք, թէ մեծ է եւ անբաւ, բայց զչափ երկայնութեան եւ զլայնութեան եւ զխորութեան, պատմել անգիտանամք բանիւ: Այսպէս եւ գութ ողորմութեանցն եւ խնամքն Աստուծոյ անթիւ, անպատում եւ անչափ են առ ամենայն ազգս մարդկան եւ զամենեսեան ըստ իւրաքանչիւր յաւժարութեան յորդորեալ յառաջացուցանէ ի բարիս եւ զպարգեւս ողորմութեան իւրոյ բաժանէ առատապէս յամէնեսեան եւ կամի, զի ամենեքեան ի գիտութիւն, ճշմարտութիւն եկեսցեն: Ըստ որում եղբայր ***Յակոբ*** ի ***յԷրեւան*** գեղաքաղաքէ, ի մանկական տիոց հետէ փութացեալ միշտ ի բարիս եւ յարդիւնս /// |244բ| /// վերըստին ստացա[ւ ի] /// [հալալ] ընչից իւրոց զաստուած[ախաւս] սուրբ Աւետարանս եւ [ս]կիհ արծաթի եւ ձեռն մի ս[գես]տ: Ի դառն եւ ի նուրբ ժամանա[կիս], ի բռնակալութեան բազում աշխարհաց եւ Տանս Արեւելեան Հայոց եւ Պարսկաց, աստուածասաստ ***Թէմուր Լանկին*** եւ որդոյ նորին ***Միրզայ Միրանշին,*** որ յարեւելից կուսէ՝ ի ***Սմըրղան*** քաղաքէ, բազում եւ անթիւ հեծելօք, վասն մեղաց մեր պատուհաս սպառնացաւ յԱստուծոյ եւ ազգի մոգութեամբ խաւար գործեաց բազում աշխարհաց եւ Տանս Հայոց, զոր ոչ կարեմք զամենայն արկանել ըն[դ] գրով:

Այլ քաջահաւատ այրս այս ***Յակոբ*** յայս նեղ ի նուրբ ժամանակի ստացաւ գհոգէփրկանք ընձայքս եւ ընձաեաց ի դուռն սրբոյ ***Երկուերեսնին՝*** յիշատակ իւր եւ ամենայն ազգայնոց իւր: Եւ մեր տեսեալ զքաջ հաւատս սորա եւ զբարէգործութիւնս ընդ ամենեսեան առ քահանայս եւ յեկեղեց[ին] եւ աղք[ա]տս եւ ի կարօտեալս եւ առ ամենայն ոք: [Վասն որոյ] եւ /// (մի քանի տառ մնացած

փակցուած թղթի տակ) ստ[ի]պեալ յ[ամ]///ցին զմեզ գրել զին/// եւ զիւրսն: Որպես յիր /// ստացուածիս, զի [ամ]ենեցուն տեսեալ զայ[ս] յորդորեցին ի բարի: Եւ արդ, աւրհնութիւն ամենակալին Աստուծոյ, եկեսցէ, հանկիցէ ի վերայ նոր[ա] եւ ի ծնընդոց նորա, եւ զցաւոն ողորմութեան [go]դեսցէ յոսկերս ննջ[ե]ցելոց նորա, եւ գրեսց[է] զանուանս նոցա ի դ[պ]րութիւն կենաց եւ աւրհնեսցէ այն աւրհնութեամբն, որ ոչ անցանէ աստ եւ ի հանդերձեալն. ամէն:

244բ (ԺԵ. դար, բոլորգիր) Զտէր ***Մանուիէլ***՝համբակ վերջին
Յաջորդ ***Բրջնոյ*** ու ***Այրարաղին,***
Որ ծըրեցի ծայրօք մատին,
Զյիշատակաց գիծս վերջին,
Միշտ յիշեսջիք առ ի բարին,
Զմեզ եւ զնախնիքն մեր բնաւին,
Եւ զձեզ յիշէ Տէր ի բարին
Աստ եւ ի յօրն ապագա[յ]ին. ամէն:

2. 243ա (ԺԵ. դար, բոլորգիր, կազմողի) [Փ]առք Հօրն երկնաւորին, Որդոյն միածնի, Հոգոյն կենարարի. ամէն:

Արդ, եւ ես՝ յետնեալ եւ զառածեալ ***Ներսէս*** անուն, որ եմ ***Մոգաց,*** ի բնիկ գեղջէն ***Սուրայ,*** ի տիս տղա[յ]ութեան իմոյ ելեալ յերկրէ իմէ, հասի ի մայրայքաղաքն ***Երեւան*** եւ բնակեցա ի Սուրբ եկեղեցին, որ է մականուն ***Երկուերեսին*** եւ եղէ սպասաւոր եւ յաւելածու ի տանս Աստուծոյ: Ժամանակ ինչ ժամահար եղէ եւ տեսի զօրութիւն սուրբ Աւետարանիս, որ բազմաց ականատես իսկ են եղեալ բժշկութիւն սորա, որ կոչի ***Վիշա[պ]կենց*** Աւետարան: Վաղուց ժամանակաց էր սա քայքայեալ եւ խաղխտե[ա]լ էր: Եւ ես՝ նուաստ ***Ներսէս,*** ետու հալալ վաստ[ակ]ոց իմոյ վերըստին նորոգել եւ կազմել յիշատակ հոգոյ իմոյ եւ ծնօղաց իմոց, եւ որ ընթեռնու, յիշէ ի սուրբ յաղօթս իւր եւ ինքն յիշեալ լին[ի] ի Քրիստոսէ Աստուծոյ մերմէ:

Սուտանուն ***Զաքարայ*** էրէց կազմօղ, ծառա[յ] ձեր:

Հմմտ. ԺԵ. դ. հիշ., հ. Ա., էջ 49-51:

ՆՇՈՒՄՆԵՐ՝ 1ա՝ «9, 1/4060, առաք. գ.» (սև թանաքով), «ԺԵ. դ.» (սև մատիտով):

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ՏԱՐԲԵՐԱԿԸ

1. 243-4բ (ԺԵ. դար, բոլորգիր, ստացողի) Անմահ Հայր Աստծո հույսով և ի փառս Ծնողի /// միածին Որդու և ճշմարիտ Հոգու նույն աստվածությունից բխած գովեստի, համազոր, համապատիվ, միևնույն ու միասնական Սուրբ Երրորդությանը՝ Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն:

Այժմ ես՝ շատերից և իմ նմաններից անպիտան և անարժան ***Վիշապի*** որդի ***Հակոբս, Երևան*** գյուղաքաղաքից, քրիստոնեությունն իմ ծնողներից ավանդաբար նախապես ընդունած, հավատով դեպի Սուրբ Երրորդության դավանությունը, մտքով հիշեցի առաքելական հրամանը, որն ասում է. «Երանի [նրան], որ կունենա

զավակ Սիոնում եւ ընտանիք յԵրուսաղէմում»: Եվ այս պատճառով օր օրի ցանկանում էի մնալ, հասնել սրտիս բաղձանքին: Ողորմած և բարեգութ Աստված, /// խնդրողների արարիչն է, լսողը՝ աղոթքների, ընդունելի համարեց մեր աղաչանքը և աստվածախոս քրիստոսատետր Սուրբ Ավետարանս՝ իբրև անգին մարգարիտ, պատահաբար հանդիպեցրեց վաճառողների ձեռքում՝ դռան մոտ, որի ականատեսն եմ եղել իմ աչքով. կապվեցի, կանգնած մնացի, ցնծացի ու զվարճացա, ուրախացա ու ամբողջացա և խիստ գոհացա ամենառատ պարգևողից, որ արժանի համարեց կատարել իմ խնդրանքը և հաճո դարձրեց իմ բաղձանքը: Որի համար և /// Արարչի կամքով |243բ| իմ հալալ վաստակով ստացա հոգու փրկություն Սուրբ Ավետարանս՝ իմ, ծնողներիս, բոլոր մերձավորներիս հիշատակին, ի Քրիստոս ննջեցյալ իմ հորը՝ ***Ուշապին,*** իմ մորը՝ ***Ջանանին,*** և իմ կենակցին՝ ***Մամախաթունին,*** և ի Քրիստոս ննջեցյալ իմ եղբայրներին՝ ***Գրիգորին*** և ***Անտիպեկին,*** և իմ որդի ***Ղտրշահին:*** Եվ արևշատության համար իմ մնացյալ որդիներ ***Աղուպշահին*** և ***Ջահանշահին,*** և իր որդի ***Դավլաթխոջին*** և նրա զավակներին՝ ***Մմբատին*** և ***Ջաքարին:*** Նաև իմ ծեր զոքանչ ***Էսուգանին,*** որ օգնական եղավ Սուրբ Ավետարանը գնելիս: Եվ այժմ ես՝ ***Հակոբս,*** աստվածախոս Սուրբ Ավետարանս, և մեկ ձեռք զգեստ և արծաթյա սկիհ, որ ստացա իմ հալալ վաստակով, ընծայեցի ***Երևանի*** հրաշալի և հոժար ժամատեղիին, որ յուրաքանչյուր տարվա Հայտնությանը, Զատկին և Հոգեգալստյանը պատարագ և Քրիստոս Որդի ասելով հիշատակեն մեզ և մեր վերոհիշյալ ծնողներին և բոլոր մերձավոր արյունակիցներին, որոնք նշված են հիշատակարանում:

Եվ այժմ աղաչում եմ Ձեզ, ո՜վ սուրբ պատարագիչներ և ընթերցողներ քրիստոսատետր Սուրբ Ավետարանիս, Ձեր մաքրափայլ աղոթքներում ամբողջ սրտով լիաբերան հիշեցեք ինձ՝ մեղավոր և անարժան ոգի ***Հակոբիս,*** և իմ հայր ***Վիշապին,*** և իմ մայր ***Ջահանին,*** և իմ կողակից ***Մամախաթունին,*** և զոքանչն՝ |244ա| ***Էսուգանին,*** և /// ազատ իմ եղբայրներին՝ ***Գրիգորին*** և ***Անտիպեկին,*** և իմ որդիներ ***Ղտրշահին***՝առ Քրիստոս ննջեցյալ և իմ նորաբողբոջ դեռաբույս որդիներ՝ ***Աղուպշահին*** և ***Դավլաթխոջին,*** և ***Մմբատին,*** և ***Ջաքարեին, Ջահանշահին*** և իմ բոլոր ազգակիցներին՝ առաջինիս, միջինիս, վերջինիս: Որով և հիշողներդ հիշված լինեք մեր Քրիստոս Աստծուց, հավիտյանս օրհնված. ամեն:

Տիրոջ աստվածային սքանչելիքները բազում են, որ տեսնում ենք աչքով և չենք կարողանում իմանալ մտքով և նաև բազում է այն, որ իմանում ենք մտքով, բայց անգիտանում ենք պատմել խոսքով: Ահա, տեսնում ենք արեգակը, որը գեղեցիկ է և հրաշալի, և գեղեցկության որպիսությունը կարողանում ենք իմանալ մտքով: Եվ դարձյալ՝ ծովը, որ գիտենք մեծ է ու անբավ, սակայն երկարության, լայնության և խորության չափը խոսքով պատմել չենք կարողանում: Այսպես և անթիվ է Աստծո ողորմության գութն ու խնամքը, անպատում ու անչափ են մարդկության բոլոր ազգերի հանդեպ, և բոլորին հորդորում է հոժարությամբ հասնել բարուն և իր ողորմության պարգևը առատապես բաժանում է ամենքին ու կամենում, քանի որ բոլորն էլ գալիս են գիտությունից ու ճշմարտությունից: Ըստ այդմ ***Հակոբ*** եղբայրը՝ ***Երևան*** գյուղաքաղաքից, մանուկ հասակից ջանացել է միշտ ի բարին և վաստակով /// |244բ| /// իրենց հալալ ունեցվածքից վերստին ստացավ Սուրբ Ավետարանս, և արծաթյա մի սկիհ և մեկ ձեռք զգեստ: Դառն ու նուրբ ժամանակներում, Հայոց Արևելից Տան ու Պարսից և ողջ աշխարհով մեկ տարածված աստվածասաստ

Լենկ-Թեմուրի բռնակալության օրոք և նրա որդի ***Միրզա Միրանշահի,*** որն արևելյան կողմից էր՝ ***Սամարղանդ*** քաղաքից, բազում և անթիվ հեծելազորով մեր մեղքերի համար Աստված պատուհասով սպառնաց և ազգի մոգությամբ խավար գործեց ամբողջ աշխարհում ու Հայոց Տանը, որ չենք կարող այդ ամենը ներկայացնել գրով:

Քաջահավատ այս ***Հակոբ*** այրը, այս նեղ ու նուրբ ժամանակներում ստացավ հոգու փրկության ընծաներն ու նվիրեց ***Սուրբ Երկուերեսնիս***՝ իր և իր բոլոր ազգակիցների հիշատակին: Եվ մենք տեսանք սրա քաջ հավատն ու բերեգործությունը՝ հանդեպ բոլորի, քահանաների, եկեղեցու, աղքատի, կարոտյալի եւ ամեն մեկի: Որի համար և /// ստիպված մեզ գրել /// և իրեն: Որպես /// ստացվածիս, քանի որ ամենքը այս տեսան ու խրատեցին ի բարին: Եվ այժմ, ամենակալ Աստծո ողորմությունը թող լինի նրա ու իր ծնողների վրա, ողորմության ցողը ցողեցնի նրա ննջեցյալների ոսկորները. և գրվեց նրանց անունից կենաց գրություն և օրհնվեց այն օրհնությամբ, որ չի անցնի այստեղ և հանդերձյալում. ամեն:

244բ (ԺԵ. դար, բոլորգիր) Տեր ***Մանուել,*** աշակերտ վերջին
Առաջնորդ ***Բջնիի*** ու ***Այրարատի,***
Որ գծեցի մատի ծայրով
Հիշատակների վերջին գիծը
Միշտ հիշեցեք առ ի բարին
Մեզ և մեր բոլոր նախնիներին
Եվ Տերը Ձեզ հիշի ի բարին
Այստեղ և ապագայում. ամեն:

2. 243ա (ԺԵ. դար, բոլորգիր, կազմողի) Փառք երկնավոր Հորը, միածին Որդուն, կենարար Հոգուն. ամեն:

Այժմ և ես՝ հետին և մոլորյալ ***Ներսես*** անուն, որ բնիկ ***Մոկսի Սուրայ*** գյուղից եմ, երիտասարդ հասակում դուրս եկա իմ երկրից ու հասա մայրաքաղաք ***Երևան*** ու բնակվեցի սուրբ եկեղեցում, որ մականվամբ կոչվում էր ***Երկուերեսի,*** և եղա Աստծո տան սպասավոր: Որոշ ժամանակ իբրև կոչնակ եղա և տեսա սուրբ Ավետարանի զորությունը, որ բազում ականատեսներ են եղել սրա բժշկությանը, որ կոչվում է ***«Վիշապկենց»*** Ավետարան: Հնությունից սա քայքայվել ու խախտվել էր: Եվ ես՝ նվաստ ***Ներսեսս,*** իմ հալալ միջոցներով տվեցի այն վերստին նորոգել ու կազմել՝ ինձ ու իմ ծնողների հոգու հիշատակին, և ով կարդա՛, հիշի՛ սուրբ աղոթքը իր, և ինքը հիշված լինի մեր Քրիստոս Աստծուց:

Կազմող սուտանուն ***Զաքարիա*** երեց, ձեր ծառա:

ЕВАНГЕЛИЕ «ЗОРАВОР» (Всемогущий)

Резюме

Евангелие № 4060 из собрания Матенадарана им. М. Маштоца, известное также под названием «Зоравор», было написано и иллюстрировано, по видимому, в XIII-XIV вв. в Киликии. Примерно в конце XIV в. рукопись была перевезена в Ереван, где её приобрел сын Ереванци Вишапа, Акоп, и передал в дар церкви Еркуересни. Об этом свидетельствуют памятные записи получателя и переплетчика (реставратора), помещенные в конце рукописи. После того, как церковь Еркуересни в Ереване пришла в упадок или была разрушена (точное ее местоположение не известно), предположительно, в начале XVIII века рукопись попадает в монашеское поселение Св. апостола Анании, в церковь Пресвятой Богородицы, выстроенную в 1693 г. на средства купца Ходжи Паноса, и нарекается по имени этой церкви, поскольку именно здесь она хранится много лет. В 1911 г. Евангелие было перевезено в Эчмиадзин, а в 1939 г. находит свое постоянное пристанище в Матенадаране им. М. Маштоца.

Рукопись представляет большую ценность не только по причине надписей, свидетельствующих о ее целительной силе (в памятной записи это отмечает также заказчик реставрации рукописи Нерсес Мокаци), но и благодаря своему примечательному орнаментальному убранству. Несмотря на то, что некоторые из миниатюр вырезаны, тем не менее имеющиеся изображения позволяют видеть в них орнаментальные решения, характерные для киликийской школы миниатюры (зооморфные основания хоранов, одинаковые изображения животных в верхней части титульных листов, повторяющиеся складки на одеянии евангелиста, архитектурный фон и др.), своеобразные цветовые сочетания, использование золота и пр.

Примечателен также переплет рукописи. Он выполнен из темно-коричневой кожи с тиснением, верхняя его створка украшена около сотней заклепок (некоторые из них утеряны), а в ее центр помещен металлический крест с памятной надписью.

В настоящем альбоме-исследовании еще одна из замечательных рукописей Матенадарана подвергается научному рассмотрению и передается на суд взыскательного читателя.

«ZORAVOR» (Powerful) GOSPEL

Summary

№ 4060 manuscript «Gospel» of Mashtots institute of Ancient Manuscripts Matenadaran, which is also famous with the name «Zoravor» (Powerful), was probably written and illustrated from 13th to 14th centuries in Kilikia. Approximately at the end of the 14th century the manuscript was removed to Yerevan where it was bought by Hakob, Yerevantsi Vishap's son, and was given as a gift to the church named Erkuseresni. To this, testify the creator's and the receiver's memoirs listed at the end of the manuscript. After the destruction of Erkueresni church of Yerevan (the exact location of which is not known till now), probably at the beginning of the 18th century, the manuscript was kept in St. Astvatsatsin church built in the desert of St. Anania Apostle, in 1693 with the help of Khoja Panos and named after him because of his staying in the place for many years. In 1911 the Gospel reached Etchmiadzin, later in 1939 it was permenantly moved to Mashtots institute of Ancient Manuscripts Matenadaran.

The manuscript is not only extremely valuable for its testaments about the power of medicine (in the memoir Nerses Mokatsi who renovated the manuscript, testifies to this fact), but also for the remarkable illustrations of its miniature ornaments. Despite of the fact that some of the miniature illustrations are damaged, the remaining pictures are especially notable for the special solutions of Kilikian miniature (animal printed anchors of altars, similar animal printed images inside the head ornament of the title page, similar illustration of the wrinkles of the preacher's clothing, architectural base, etc.), for its unique color solutions with the use of gold, etc.

The cover of the manuscript is very remarkable too. It is constructed of dark brown illustrated leather, the outer binding of which is ornamented with over hundreds big and small boughs (ball head nails, several of which are fallen) and is strengthened with the metallic unscripted cross in the middle.

This album-study scientifically investigates one of the remarkable manuscripts of Matenadaran and presents it to the public appreciation.

Կարպիանոսի դիմանկարը գլխազարդի կենտրոնում
(ՍՄ ձեռ. Հ՝մ 4060, էջ 2ա)

ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐ

Եվսեբիոսի նամակը Կարպիանոսին (ՄՄ ձեռ. Հ՝ 4060, էջ 1բ-2ա)

Կարպիանոսի դիմանկարը գլխազարդի կենտրոնում
(ՍՄ ձեռ. Հ^{մր} 4060, էջ 2ա)



Խորան (ՄՄ ձեռ. Հ^{ամ} 4060, էջ 3բ)



Խորան (ՍՄ ձեռ. Հ^{ՄՊ} 4060, էջ 4ա)



Խորան (ՄՄ ձեռ. Հ^{մր} 4060, էջ 5բ)



Խորան (ՍՄ ձեռ. Հ^{ամ} 4060, էջ 6ա)

Խորան (ՄՄ ձեռ. Հ^մր 4060, էջ 7բ)

Խորան (ՍՄ ձեռ. Հ^{ամ} 4060, էջ 8ա)



Խորան (ՄՄ ձեռ. Հ^մր 4060, էջ 9բ)

Խորան (ՄՄ ձեռ. Հ^{ամ} 4060, էջ 10ա)



Խորան (ՄՄ ձեռ. Հ^մտ 7644, էջ 4ա)

Խորան (ՍՄ ձեռ. Հ^{մր} 7644, էջ 8ա)

Մատթեոս ավետարանիչ (ՄՄ ձեռ. Հ^{ձ} 4060, էջ 11բ)

Մատթեոսի Ավետարանի անվանաթերթը (ՄՄ ձեռ. Հ՝ 4060, էջ 12ա)

Մատթեոս ավետարանիչ (ՍՄ ձեռ. Հ^{մր} 7644, էջ 11բ)

Մատթեոսի Ավետարանի անվանաթերթը (ՄՄ ձեռ. Հ՝ 7644, էջ 12ա)

Մարկոսի Ավետարանի անվանաթերթը (ՄՄ ձեռ. Հ^{մր} 4060, էջ 77ա)

Ղուկասի Ավետարանի անվանաթերթը (ՄՄ ձեռ. Հ՝ 4060, էջ 121ա)

Հովհաննեսի Ավետարանի անվանաթերթը (ՄՄ ձեռ. Հ^{ձ} 4060, էջ 192ա)





Լուսանցային մանրանկարներ. Հովհաննես Մկրտիչ
(ՄՄ ձեռ. Հ՝ 4060, էջ 15բ, 39բ)



Լուսանցային մանրանկարներ. Ավետում
(ՄՄ ձեռ. Հ^{մր} 4060, էջ 122բ-123ա)

Լուսանցային մանրանկարներ. Զաքեոս (ՄՄ ձեռ. Հ^{մր} 4060, էջ 175բ),
Յիսուս Քրիստոս (ՄՄ ձեռ. Հ^{մր} 4060, էջ 199բ)



Լուսանցային մանրանկարներ. Պողոս և Պետրոս առաքյալներ
(ՄՄ ձեռ. Հ՝ 4060, էջ 240բ-241ա)

Լուսանցազարդ. բուսական (ՄՄ ձեռ. Հ՝ 4060, էջ 17ա, 59ա)



Լուսանցազարդ. թռչնային (ՄՄ ձեռ. Հ^{մր} 4060, էջ 111բ, 33ա)



Լուսանցազարդ. ծառ (ՄՄ ձեռ. Հ^{մր} 4060, էջ 53բ, 54բ)



Լուսանցազարդ. տաճար (ՄՄ ձեռ. Հ^{ամ} 4060, էջ 61բ, 126բ)

Լուսանցազարդ. խաչ (ՄՄ ձեռ. Հ^{ձր} 4060, էջ 73ա, 197ա)



Զարդագրեր (ՄՄ ձեռ. Հ^{մր} 4060, էջ 16բ, 22ա)



Զարդագրեր (ՄՄ ձեռ. Հ^{մր} 4060, էջ 46բ, 91ա)





Զարդագրեր (ՄՄ ձեռ. Հ^{մր} 4060, էջ 102ա, 160բ)





Զարդագրեր (ՄՄ ձեռ. Հ^{մր} 4060, էջ 209բ, 48ա)

ԱՐՍԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ԱՐՓԻՆԵ ՍԻՄՈՆՅԱՆ
ԶՈՐԱՎՈՐ ԱՎԵՏԱՐԱՆԸ

АРСЕН АРУТЮНЯН
АРПИНЕ СИМОНЯН
ЕВАНГЕЛИЕ «ЗОРАВОР» (Всемогущий)

ARSEN HARUTYUNYAN
ARPINE SIMONYAN
«ZORAVOR» (Powerful) GOSPEL

Լուսանկարները տրամադրել է
Մաշտոցյան Մատենադարանի թվայնացման բաժինը

Շապիկի լուսանկարը՝ Հրայր Բազեի

Խմբագիր՝ Գևորգ Տեր-Վարդանյան
Սրբագրիչ՝ Արսեն Հարությունյան

Համակարգչային շարվածքը՝ Ա. Հարությունյան
Ա. Սիմոնյան

Ձևավորումը՝ Սեն Հովհաննիսյանի
Հովհաննես Հովհաննիսյանի

Էջադրումը՝ Սեդա Հովհաննիսյանի

Կազմի ձևավորումը և
տեխ. խմբագիր՝ Արամ Ուռուտյան

Տպաքանակ՝ 1000